

PARLIAMENT
MONITORING

03.02.2014 - 21.06.2014

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-րդ գՈՒՄԱՐՈՒՄ | 5-րդ ՆԱՏՇՐԶԱՆ | 4-րդ ԶԵԿՈՒՅՑ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆՐԱՏ» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ | 4-ՐԴ ԶԵԿՈՒՅՑ

03.02.2014 - 21.06.2014

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N18699: Զեկույցում տեղ գտած տեսակետերը և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության տեսակետերին ու դիրքորոշումներին:



ՆԱԽԱԲԱՆ

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 5-րդ գումարման Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Զեկույցը կազմված է 4 բաժնից: Առաջին բաժնում ամփոփվել են հինգերորդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի գործունեության ընդհանուր միտումներն ու ցուցանիշները, ներկայացվել են ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին տվյալներ:

«Օրենսդրություն» բաժնում ներառվել են գարնանային նստաշրջանի ընթացքում ընդունված օրենսդրական փաթեթներից մի քանիսի դիտարկման արդյունքները՝ կատարված լրագրողական և փորձագիտական աշխատանքների համադրմամբ: Օրենսդրական յուրաքանչյուր փաթեթի վերաբերյալ ներկայացվել է խորհրդարանական քննարկման ընթացքը, խմբակցությունների արտահայտած դիրքորոշումները համեմատվել են ծրագրային մոտեցումների հետ, տրվել են փորձագիտական գնահատականներ:

«ԱԺ վերահսկողությունը» բաժնում անդրադարձ է կատարվել ԱԺ վերահսկողական գործառույթներին: Դիտարկվել են նստաշրջանի ընթացքում ներկայացված հաղորդում-հաշվետվությունները՝ օրենքով սահմանված ընթացակարգերի և խորհրդարանական քննարկումների արդյունավետության տեսանկյունից:

Չորրորդ բաժնում ամփոփվել են 5-րդ գումարման Ազգային ժողովում իր գործունեությունը սկսած էթիկայի հանձնաժողովի աշխատանքի արդյունքները:

Զեկույցի վերջին՝ «Հավելված» բաժնում ներառված են օրենքների փորձագիտական վերլուծությունները:

Փորձագիտական խումբ

Աբրահամյան Գոռ

Զարաֆյան Ինգա

Զեյնալյան Արտակ

Խաչատրյան Վիլեն

Հարությունյան Մեսրոպ



ՑԱՆԿ

Նստաշրջանը թվերով	4
ԱԺ խմբակցությունները (օրենսդրական նախաձեռնություններ, ակտիվություն)	8
Հայաստանի հանրապետական կուսակցություն	8
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	9
Հայ ազգային կոնգրես	10
«Օրինաց երկիր» խմբակցություն	11
«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն	12
«Ժառանգություն» խմբակցություն	13
ԱԺ վերահսկողությունը	15
ԱԺ օրենսդրական գործունեությունը	24
ԱԺ էթիկայի հանձնաժողովը	48
Փորձագիտական վերլուծություններ / հավելված	50



ԱԺ 5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ, 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Ցույանհիշներ կամ նստաշրջանը թվերով

ՀՀ Ազգային ժողովի 5-րդ գումարման 5-րդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 քառօրյա նիստ, հրավիրվել է 2 արտահերթ նստաշրջան և երկու արտահերթ նիստ: Ընդունվել է 143 օրենք, որոնցից 13-ը «մայր» օրենքներ են, իսկ 130-ը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում: Օրենքների կեսից ավելին՝ 77-ը, ընդունվել է արտահերթ նստաշրջանների ընթացքում, իսկ 66-ը՝ հերթական նստաշրջանում:

Ընդունված օրենքներից 136-ի հեղինակը ՀՀ կառավարությունն է, և միայն 7-ինը՝ ԱԺ պարզամավորները (նախաձեռնությունները վերաբերում են հեռուստագովազդի կանոնակարգումներին, գլխավոր դատախազի՝ Ազգային ժողովում հաղորդում ներկայացնելու կարգին, հարկային օրենսդրությանը):

Ընդունված օրենքներից 54-ը վերաբերում է պետաիրավական ոլորտին, 41-ը՝ սոցիալ-տնտեսականին, 18-ը՝ պաշտպանությանը, 14-ական օրենք վերաբերում է գյուղատնտեսության և կրթության ոլորտներին:

Խորհրդարանը քննարկել և մերժել է ոչ իշխանական խմբակցությունների հեղինակած 5 նախաձեռնություն, որոնցից 4-ով առաջարկվում էր ստեղծել ԱԺ ժամանակավոր հանձնաժողովներ, իսկ 1-ով՝ փոփոխություններ կատարել Ընտրական օրենսգրքում: Ազգային ժողովը վավերացրել է 8 միջազգային պայմանագիր, ընդունել է ՀՀ նախագահի առարկություններն ու առաջարկությունները նստաշրջանի ընթացքում ընդունված 2 օրենքի վերաբերյալ («Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին», «Սահմանադրական դատարանի մասին» օրենքներ):

ԱԺ-ն քննարկել է 4 ծրագիր, 2 հաշվետվություն, այդ թվում կառավարության ծրագիրը, 2013թ. պերբյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ԿԲ 2013թ. գնաձի հաշվետվությունը և 2014թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը, ՀԾԿՀ և ՏՄՊՊՀ գործունեության տարեկան ծրագրերը:

Ուշագրավ փաստեր

- ▲ Նստաշրջանի ընթացքում ձևավորվեց խորհրդարանի պատմության մեջ աննախադեպ իրավիճակ. քսան տարիների ընթացքում առաջին անգամ իշխող մեծամասնությունը ներկայացնում է միայն մեկ քաղաքական ուժ՝ Հանրապետական կուսակցությունը:
- ▲ Փոխվեց ԱԺ նախագահը. Հովիկ Աբրահամյանի՝ վարչապետ նշանակվելուց հետո խորհրդարանն ԱԺ նախագահի պաշտոնում ընտրեց ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանին:


ԱԺ 5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ, 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

- ▲ «Օրինաց երկիր» խմբակցությունը իր խորհրդարանական պատմության մեջ երկրորդ անգամ հայտարարեց կոալիցիայից դուրս գալու և ընդդիմություն դառնալու մասին:
- ▲ Խորհրդարանական փոքրամասնությունը ողջ նստաշրջանի ընթացքում հանդես եկավ միասնական պլատֆորմով՝ քառյակի ձևաչափով, իսկ նստաշրջանի ավարտին ստորագրեց 12 կետից կազմված հայտարարություն՝ կառավարությանը ներկայացված պահանջների կատարման համար վերջնաժամկետ սահմանելով:
- ▲ ՀՀԿ-ՕԵԿ կոալիցիայի նախաձեռնությամբ ստեղծվեց գազամատակարարման ոլորտի խնդիրներն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով: Նման հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ քառյակի առաջարկը մինչ այդ մերժվել էր:
- ▲ Հանրային մեծ հնչեղություն ստացած «Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքում ՍԴ ապրիլի 2-ի որոշումից հետո կառավարության ներկայացրած փոփոխություններն ընդունվեցին խնդրահարույց քվեարկությամբ:
- ▲ Նստաշրջանի ընթացքում երկու անգամ փոխվեց հաշվիչ հանձնաժողովի ձևավորման կարգը. արդյունքում հանձնաժողովի կազմը գրեթե կրկնապատկվեց՝ ապահովելով ՀՀԿ-ականների բացարձակ մեծամասնությունը:

Միտումներ կամ թվերի հետևում

- ▲ Օրինաստեղծ աշխատանքում խորհրդարանի նախաձեռնողականության մակարդակը նախորդ նստաշրջանի համեմատ նվազել է: Եթե 4-րդ նստաշրջանի ընթացքում օրենսդրական նախաձեռնությունների ԱԺ-կառավարություն փոկոսային հարաբերակցությունը 87/13 էր, ապա 5-րդ նստաշրջանում՝ 95/5:

Օրենսդրական նախաձեռնություններ




- ▲ 5-րդ գումարման ԱԺ 5-րդ նստաշրջանում խորհրդարանական մեծամասնությունը՝ ՀՀԿ-ն, պահպանել է քվեարկությունների տրամաբանությունը. դեմ քվեարկությունները, ինչպես նախորդ նստաշրջանում, 1 փոկոսի շրջակայքում են և բացառապես վերաբերում են ընդդիմության նախաձեռնություններին:




ԱԺ 5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ, 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Խորհրդարանական մեծամասնության քվեարկության պատկերը



▲ Ըստ հարցերի ու ելույթների վիճակագրության՝ դիտարկված ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշն արձանագրել է ՀՀԿ խմբակցությունը (225 հարց ու ելույթ), ամենացածրը «Ժառանգություն» արդյունքն է (46 հարց ու ելույթ): Սակայն ակտիվության ցուցանիշը խմբակցությունների պարզամավորների քանակի հետ համադրելիս սրապվում է, որ ԱԺ երկու մեծ խմբակցությունների՝ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի պարզամավորներից յուրաքանչյուրը միջին հաշվով հարց փոխել կամ ելույթ ունեցել է 3 անգամ, իսկ փոքրաթիվ խմբակցությունների պարզամավորները՝ մոտ 20 անգամ: Այս տեսանկյունից գարնանային նստաշրջանի ընթացքում խորհրդարանում ամենապասիվը եղել է ԲՀԿ-ն, իսկ ամենաակտիվը՝ ՀԱԿ-ը:

ԱԺ խմբակցությունների ակտիվությունը



▲ Ըստ parliamentmonitoring.am-ի վիճակագրության՝ 5-րդ գումարման Ազգային ժողովի ամենաշատ բացակայած պարզամավորը ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանն է: Ամենաշատը կողմ են քվեարկել ՀՀԿ խմբակցության պարզամավորներ Ռազմիկ Զոհրաբյանն ու Հովհաննես Սահակյանը: Ամենաշատ դեմ քվեարկած օրենսդիրը Նիկոլ Փաշինյանն է, ամենաակտիվը Արծվիկ Մինասյանն է՝ ՀՅԴ-ից:



ԱԺ 5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ, 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ

- ▲ Ըստ parliamentmonitoring.am-ի վիճակագրության՝ 5-րդ գումարման Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանում 131 պարզամավորների գրեթե կեսը՝ 65 պարզամավոր, օրենսդրական նախաձեռնությունների քննարկման ժամանակ ոչ մի հարց չի փակվել և ոչ մի ելույթ չի ունեցել: ՀՀԿ և ԲՀԿ խմբակցություններում «լուռ» պարզամավորները կեսից ավելին են: ՀՀԿ-ում 70-ից 36-ը, ԲՀԿ-ում 36-ից 23-ը:
- ▲ Կառավարության նախաձեռնությամբ հրավիրված 2 արտահերթ նստաշրջանի 9 օրերի ընթացքում խորհրդարանն ավելի շատ օրենք է ընդունել, քան գարնանային ողջ նստաշրջանի 5 ամիսների ընթացքում: 143 օրենքից 77-ն ընդունվել է արտահերթ նստաշրջաններում:
- ▲ 6 փասնյակից ավելի օրինագծեր կառավարությունը համարել է անհետաձգելի, և խորհրդարանն անխտիր բոլորի վերաբերյալ 24-ժամյա ռեժիմով հաջորդ ընթերցումները կազմակերպելու որոշումներ է ընդունել: Կառավարությունը որևէ կերպ չի հիմնավորել անհետաձգելի համարելու պարզաձայները, խորհրդարանը դրանցով չի հետաքրքրվել:
- ▲ 3 փասնյակից ավելի օրինագծեր՝ մի քանի հարյուր էջ ընդհանուր ծավալով, օրենք դառնալու ճանապարհը խորհրդարանում սկսել են հունիսյան արտահերթի առաջին օրը (հունիսի 18) և 4-րդ օրն արդեն դարձել են ընդունված օրենքներ: Ամենավիճահարույց օրենսդրական փաթեթները՝ կուրակային կենսաթոշակների (11 օրինագիծ) և շրջակա միջավայրի (3 օրինագիծ) մասին, բոլոր 3 ընթերցումներն անցել են ռեկորդային ժամանակահատվածում՝ մեկ օրում:
- ▲ 5-րդ գումարման 5-րդ նստաշրջանի ընթացքում ԱԺ էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը հրավիրել է 7 նիստ՝ քննարկման առարկա դարձնելով ընդամենը 3 դիմում («Սինջար եզդիների ազգային միավորում» և «Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ-ների դիմումը՝ ընդդեմ ՀՀԿ-ական պարզամավոր Մանվել Բաղդեյանի, Լրագրողներ Գրիշա Բալասանյանի, Աննա Եղիազարյանի, Սարգիս Խանդանյանի և Հակոբ Կարապետյանի դիմումը՝ ընդդեմ ՀՀԿ-ական Առաքել Մովսիսյանի, և պարզամավոր Նիկոլ Փաշինյանի դիմումը, որը վերաբերում էր հենց իրեն Փաշինյանին): Քննարկված 3 դիմումներից 2-ի վերաբերյալ հանձնաժողովը ընդունել է դրանց քննությունը կարճելու որոշումներ և միայն 1-ի դեպքում է որոշել, որ պարզամավորը՝ Առաքել Մովսիսյանը, խախտել է էթիկայի նորմերը:
- ▲ 5-րդ գումարման խորհրդարանի հետ իր գործունեությունը սկսած էթիկայի հանձնաժողովի նկատմամբ հանրային վստահության մակարդակը, ըստ սրացված դիմումների քանակի, աստիճանաբար նվազում է: Երկրորդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովն սրացել է 13 դիմում, երրորդ նստաշրջանում՝ 6, չորրորդում՝ 2, իսկ հինգերորդում՝ 3 դիմում:

ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Նախաձեռնողականություն, ակտիվություն

- ▲ Նստաշրջանի ընթացքում ընդունվել է մեկ օրինագիծ, որի փակ ստորագրել են խորհրդարանական բոլոր խմբակցությունները (Ազգային ժողովում գլխավոր դատախազի հաղորդում ներկայացնելու ընթացակարգի մասին), իսկ պարզամավորների նախաձեռնությունների արդյունքում նստաշրջանի ընթացքում ընդունված բոլոր 7 օրենքների հեղինակները հանրապետականներն են՝ միայնակ կամ այլ խմբակցությունների հետ:
- ▲ Նստաշրջանի ընթացքում ոչ իշխանական քառյակի հեղինակած ոչ մի օրինագիծ չի ընդունվել: Նիստերի դահլիճում քննարկված և քվեարկությամբ մերժված 5 նախաձեռնություն օրակարգ է ընդգրկվել արտահերթ ընթացակարգով: Քառյակի ավելի քան 2 փասնյակ օրինագիծ գլխադասային հանձնաժողովներում դրական եզրակացություն չի ստացել, օրակարգ չի ընդգրկվել կամ հետաձգվել է:
- ▲ Նիստերի դահլիճում արտահերթ ընթացակարգով քննարկվել և մերժվել է ԲՀԿ, ՀՅԴ, ՀԱԿ և «Ժառանգություն» խմբակցությունների որոշման նախագիծը՝ գազամատակարարման ոլորտի խնդիրներն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին:

«Հանրապետական» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանի ընթացքում ՀՀԿ-ն հեղինակել է 17 օրենսդրական նախաձեռնություն: Ամբողջությամբ ընդունվել է դրանցից 7-ը: Ընդունված օրենքներից 4-ը ՀՀԿ-ն հեղինակել է այլ ուժերի հետ: 4 օրենսդրական նախաձեռնություն նստաշրջանի օրակարգում է, 6 նախագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 փարի ժամկետով:

ՀՀԿ խմբակցության քվեարկությունների պատկերը





ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 5-րդ նստաշրջանի ընթացքում


ՀՀԿ խմբակցության ամենաշատ հարց տրված և ելույթ ունեցած պարզամավորը Խոսրով Հարությունյանն է (30 հարց, 22 ելույթ): Խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների թիվն անցնում է 3 փասնյակը, իսկ ամենաշատ դեմ քվեարկածը Արա Բաբլոյանն է (4): Ամենաշատ չքվեարկածը (22) Միեր Սեդրակյանն է, ամենաշատ բացակայածը (52)՝ Կարեն Կարապետյանը:

Խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների փասնյակը կազմված է բացառապես ՀՀԿ-ականներից: Փոխարենը ոչ մի ՀՀԿ-ական չկա ամենաշատ դեմ և ձեռնպահ քվեարկածների փասնյակներում: Ամենաշատ բացակայածների և ամենակատիվների փասնյակներում մեկական հանրապետականներ են:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանի ընթացքում ԲՀԿ-ն հեղինակել է 15 օրենսդրական նախաձեռնություն: Ամբողջությամբ ընդունվել է 3-ը, որոնցից 2-ը ԲՀԿ-ն հեղինակել է ՀՀԿ-ի, իսկ 1-ը՝ բոլոր խմբակցությունների հետ: Նստաշրջանի ընթացքում միայն ԲՀԿ-ի հեղինակած ընդամենը 1 նախագիծ ընդունվել է առաջին ընթերցմամբ (հեղինակ՝ Միքայել Մելքումյան): Խմբակցության 2 նախագիծ գլխադասային հանձնաժողովում դրական եզրակացություն չի ստացել և նստաշրջանի օրակարգ չի ընդգրկվել, 1-ը ընդգրկվել է քառօրյա օրակարգ, 8 նախագիծ ընդգրկում նստաշրջանի օրակարգ հերթաձգվել է մինչև 1 փարի ժամկետով:

ԲՀԿ խմբակցության քվեարկությունների պատկերը





ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 5-րդ նստաշրջանի ընթացքում


ԲՀԿ խմբակցության պարզամավորներից ամենաշատը հարց է տրվել և ելույթ է ունեցել Միքայել Մելքումյանը (15 հարց, 18 ելույթ), ամենաշատը չի քվեարկել Ռուբեն Գևորգյանը (22), ամենաշատը դեմ է քվեարկել Վահե Հովհաննիսյանը (12): Ամենաշատ կողմ քվեարկածները 4-ն են (43): Ամենաշատը բացակայել է Գագիկ Ծառուկյանը (75), իսկ 367 բացակայություններով Ծառուկյանը գլխավորում է գումարման ընթացքում ամենաշատը բացակայած պարզամավորների փասնյակը: ԲՀԿ-ականներն այս փասնյակում 5-ն են (Գագիկ Ծառուկյան, Գուրգեն Արսենյան, Կարո Կարապետյան, Աբրահամ Մանուկյան, Արագած Ախոյան):

Գումարման ընթացքում ամենաշատը ձեռնպահ քվեարկել է Սյրեփան Մարգարյանը (86): Ամենաշատ կողմ և դեմ քվեարկած պարզամավորների փասնյակում չկա ոչ մի ԲՀԿ-ական: Ամենաակտիվների փասնյակում նրանք 2-ն են (Միքայել Մելքումյան, Սյրեփան Մարգարյան):

«Հայ ազգային կոնգրես» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանում ՀԱԿ-ը հեղինակել է 7 օրենսդրական նախաձեռնություն: Նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքներից միայն մեկի՝ «ԱԺ կանոնակարգ» և «Դատախազության մասին» օրենքներից կազմված փաթեթի փակ կա ՀԱԿ պարզամավորի անուն. այս փաթեթը հեղինակել են ԱԺ բոլոր խմբակցությունները:

ՀԱԿ խմբակցության քվեարկությունների պատկերը





ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտահերթ ընթացակարգով քննարկվել և մերժվել է ՀԱԿ նախաձեռնություններից միայն մեկը՝ մարտի 1-2-ի դեպքերն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին: ՀԱԿ-ը ունի քառօրյա օրակարգ ընդգրկված ընդամենը 1 նախագիծ (հեղինակը՝ Հրանտ Բագրատյան), 5 նախագծի ընդգրկում նստաշրջանի օրակարգ (1-ը՝ բոլոր խմբակցությունների համահեղինակությամբ) հետաձգվել է մինչև 1 տարի ժամկետով:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 5-րդ նստաշրջանի ընթացքում


ՀԱԿ խմբակցության ամենաշատ կողմ (33) և ձեռնպահ (20) քվեարկած պարզամավորը Լյուդմիլա Սարգսյանն է: Ամենաշատը հարց է տվել Գագիկ Զհանգիրյանը (24), Ելույթ ունեցել Հրանտ Բագրատյանը (17): Ամենաշատ բացակայածը Ստեփան Դեմիրճյանն է (27): Խմբակցության ամենաշատ դեմ քվեարկած պարզամավորը Նիկոլ Փաշինյանն է (32), իսկ 161 «դեմով» նա գլխավորում է գումարման ընթացքում ամենաշատ դեմ քվեարկած պարզամավորների տասնյակը: Գումարման ընթացքում ամենաշատ կողմ ու ձեռնպահ քվեարկածների և ամենաշատ բացակայածների տասնյակներում ՀԱԿ որևէ պարզամավոր չկա: Ամենակտիվների տասնյակում խմբակցության 3 պարզամավոր է (Նիկոլ Փաշինյան, Հրանտ Բագրատյան, Գագիկ Զհանգիրյան):

«Ժառանգություն» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանի ընթացքում «Ժառանգություն» խմբակցությունը հեղինակել է 8 օրենսդրական նախաձեռնություն: Ընդունվել է միայն 1-ը՝ բոլոր խմբակցությունների համահեղինակությամբ:

Նիստերի դահլիճում արտահերթ ընթացակարգով քննարկվել և մերժվել է «Ժառանգության» մեկ նախագիծ, որով առաջարկվում էր ստեղծել ժամանակավոր հանձնաժողով՝ 2012-2013թթ. ընթացքում արագաչափերի և տեսանկարահանող սարքերի կիրառման, վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման, չշահագործվող ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության փուլանքների գործադրման ազդեցությունը ուսումնասիրելու համար: «Ժառանգությունը» քառօրյա օրակարգ ընդգրկված որևէ նախագիծ չունի, 7 նախագծի ընդգրկում նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 տարի ժամկետով:

«Ժառանգություն» խմբակցության քվեարկությունների պատկերը





ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 5-րդ նստաշրջանի ընթացքում


«Ժառանգություն» խմբակցության պարզամավորներից ամենաշատը հարց տվել և ելույթ է ունեցել Թևան Պողոսյանը (18 հարց, 7 ելույթ): Ամենաշատը կողմ քվեարկել է Ռուբեն Հակոբյանը (35), դեմ՝ Ալեքսանդր Արզումանյանը (27): Նա նաև խմբակցության ամենաշատ ձեռնպահ քվեարկած պարզամավորն է (15): Ամենաշատը չի քվեարկել Ռուբեն Հակոբյանը (7), իսկ ամենաշատ բացակայածը Զարուհի Փոստանջյանն է (75): Այս ցուցանիշով նա խմբակցության միակ անդամն է, ով հայտնվել է գումարման ընթացքում ամենաշատ բացակայած պարզամավորների փասնյակում:

Գումարման ընթացքում ամենաշատ կողմ քվեարկած ու ամենաակտիվ պարզամավորների փասնյակում «Ժառանգությունը» որևէ ներկայացուցիչ չունի: Ամենաշատ դեմ քվեարկածներից խմբակցության անդամ են 3-ը (Ալեքսանդր Արզումանյան, Ռուբեն Հակոբյան, Թևան Պողոսյան), ամենաշատ ձեռնպահ քվեարկածներից՝ 1-ը (Ալեքսանդր Արզումանյան):

«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն

Նստաշրջանի ընթացքում արտահերթ ընթացակարգով քննարկվել և մերժվել է ՀՅԴ-ի հեղինակած 2 նախաձեռնություն. մեկով առաջարկվում էր փոփոխություն կատարել Ընտրական օրենսգրքում և սահմանել 100% համամասնական ընտրակարգ, մյուսով՝ ստեղծել ժամանակավոր հանձնաժողով «Նաիրի» գործարանի գործունեությունն ու զարգացման հեռանկարները ուսումնասիրելու համար: ՀՅԴ-ն ունի նստաշրջանի օրակարգ ընդգրկված 1 նախագիծ: Եվս 1-ի ընդգրկումը, որին համահեղինակ են ԱԺ բոլոր խմբակցությունները, հետաձգվել է մինչև 1 փարի ժամկետով:

ՀՅԴ խմբակցության քվեարկությունների պատկերը





ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 5-րդ նստաշրջանի ընթացքում

ՀՅԴ խմբակցության պարզամավորներից ամենաշատ հարց տվել և ելույթ է ունեցել Արծվիկ Մինասյանը (20 հարց, 18 ելույթ): Նա նաև խմբակցության ամենաշատ կողմ (26), դեմ (17) և ձեռնպահ (34) քվեարկած պարզամավորն է: Ամենաշատը չի քվեարկել (9) և բացակայել է (31) Արմեն Բաբայանը: Բացակայությունների այս ցուցանիշով Արմեն Բաբայանը խմբակցության միակ պարզամավորն է, ով ընդգրկվել է գումարման ընթացքում ամենաշատ բացակայած պարզամավորների փասնյակում:


Գումարման ընթացքում ամենաշատ կողմ քվեարկածների փասնյակում ՀՅԴ խմբակցության ոչ մի պարզամավոր չկա: Ձեռնպահ քվեարկածների փասնյակում դաշնակցականները 4-ն են (Արծվիկ Մինասյան, Աղվան Վարդանյան, Արմեն Ռուստամյան, Արմեն Բաբայան): Տասնյակը 172 ձեռնպահով գլխավորում է Արծվիկ Մինասյանը: Նա նաև ամենաակտիվ պարզամավորն է և ՀՅԴ-ից միակն է ամենաակտիվների փասնյակում:

«Օրինաց երկիր» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանի ընթացքում ՕԵԿ-ը հեղինակել է 10 օրենսդրական նախաձեռնություն: 2-ը՝ ներկայացված այլ խմբակցությունների համահեղինակությամբ, ընդունվել են: Խմբակցության 2 նախագիծ ընդգրկվել է նստաշրջանի օրակարգ, ևս 1-ը՝ ՀՀԿ-ի համահեղինակությամբ, քառօրյայի օրակարգում է:

5 նախագծի ընդգրկում նստաշրջանի օրակարգ հերթագվել է մինչև 1 փարի ժամկետով: Այս նախագծերից 1-ը ՕԵԿ-ը հեղինակել է ՀՀԿ-ի, մյուսը՝ ԱԺ բոլոր խմբակցությունների հետ միասին: Միայն ՕԵԿ-ի կողմից հեղինակված որևէ նախագիծ նիստերի դահլիճում չի քննարկվել:

ՕԵԿ խմբակցության քվեարկությունների պատկերը





ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 5-րդ նստաշրջանի ընթացքում

Գումարման ընթացքում ՕԵԿ խմբակցության ամենաշատը հարց տված պարզամավորները Սիեր Շահգելդյանն ու Հովհաննես Մարգարյանն են (21), ամենաշատը ելույթ է ունեցել (15) ու դեմ է քվեարկել (7) Սիեր Շահգելդյանը: Ամենաշատը կողմ քվեարկել է Իշխան Խաչատրյանը (50), բացակայել է (4) և չի քվեարկել (26) Հովհաննես Մարգարյանը: Նստաշրջանի ընթացքում ամենաշատը ձեռնպահ քվեարկել է Լևոն Դոխոյանը (17):

Գումարման ընթացքում ամենաշատ կողմ, դեմ, ձեռնպահ քվեարկած, ամենաշատ բացակայած պարզամավորների տասնյակներում ոչ մի ՕԵԿ-ական չկա: Ամենաակտիվ պարզամավորների տասնյակի միակ ՕԵԿ-ականը Հովհաննես Մարգարյանն է:



ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վերահսկողությունը պառլամենտի կարևորագույն իրավասություններից ու գործառույթներից է սահմանված երկրի բարձրագույն օրենքով: Սահմանադրությամբ խորհրդարանին վերապահված իրավասությունները բխում են իշխանությունների փարանջափման ու հակակշռման հիմնարար սկզբունքից, ինչը ենթադրում է նաև խորհրդարանի լրջագույն պատասխանատվություն այդ գործառույթն իրականացնելիս: Վերջին փորձերի փորձը, սակայն, վկայում է, որ ԱԺ քաղաքական մեծամասնությունն ավելի հակված է իր իրավասությունները, լծակներն ու պատասխանատվությունը սփռադասել «քաղաքական միասնական թիմի» սկզբունքին, որն իրավական որևէ հիմնավորում չունի: Նման մոտեցումը ոչ միայն չի բխում իշխանությունների փարանջափման ու հակակշռման վերաբերյալ սահմանադրական հիմնարար սկզբունքից, այլև ուղղակի հակասության մեջ է այդ սկզբունքի հետ: Իշխանության ղեկին գտնվող քաղաքական մեծամասնությունը, այսպիսով, խորհրդարանին վերապահել է առավելապես ձևական ֆորմալ, դերակատարություն պետության կառավարման մեջ:

Խորհրդարանի վերահսկողական գործառույթի իրականացման տեսանկյունից 5-րդ նստաշրջանն առանձնապես չէր փարբերվում նախորդներից, սակայն ուներ իր առանձնահատկությունները.

- ▲ 5-րդ գումարման խորհրդարանին վիճակված էր կառավարության 3 ծրագիր հաստատել իր գործունեության առաջին երկու փարվա ընթացքում. երրորդ անգամ խորհրդարանն այդ արեց դիֆարկվող նստաշրջանի ընթացքում պայմանավորված կառավարության հրաժարականի և նոր կառավարության ձևավորման իրողություններով.
- ▲ գարնանային նստաշրջանի ընթացակարգով պայմանավորված՝ խորհրդարանը լսեց և հավանության արժանացրեց նախորդ փարվա բյուջեի կատարողականի մասին կառավարության հաշվետվությունը. երկու ամիս առաջ հրաժարական փրված և շարերի կարծիքով ձախողված կառավարության մեկամյա գործունեության արդյունքները ներկայացնում էր նոր կառավարությունը, որն իր կազմած հաշվետվությամբ փաստում էր, որ ծրագիրը կատարվել է ամբողջությամբ՝ առանց բացթողումների ու թերացումների. խորհրդարանական մեծամասնությունը կիսում էր կառավարության այդ գնահատականները.
- ▲ նստաշրջանի ամենաբնորոշ առանձնահատկությունը խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծելու վերաբերյալ նախաձեռնությունների առաջարկումն էր. փարաբնույթ խնդիրների վերաբերող նման նախաձեռնություններով էր հանդես գալիս քաղաքական փոքրամասնությունը՝ փորձելով այս դաշտում գտնել ինքնարտահայտման իրական հնարավորություններ. փոքրամասնության նախաձեռնություններից ոչ մեկն իրականություն չդարձավ, սակայն դրանցից մեկն առիթ դարձավ, որպեսզի մեծամասնությունը սեփական նախաձեռնությամբ ստեղծի նման հանձնաժողով:



ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԱԺ Ժամանակավոր հանձնաժողովներ

Գարնանային նստաշրջանի ընթացքում խորհրդարանական փոքրամասնությունը չորս անգամ հանդես եկավ ԱԺ Ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծելու նախաձեռնություններով: Բոլոր չորս դեպքերում համապատասխան որոշումների նախագծերը նստաշրջանի ու քառօրյաների օրակարգ ընդգրկվեցին արտահերթ կարգով պարզամավորների 1/3-ի ստորագրություններով:

- ▲ **«ՀՀ գազամատակարարման ոլորտում 2011 թվականից պետական պարտքի և գազի գների ձեւավորման ուսումնասիրության ԱԺ Ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին»** որոշման նախագծով (հեղինակը՝ ոչ իշխանական քառյակ) նախատեսվում էր, որ հանձնաժողովը պետք է ուսումնասիրեր Ռուսաստանից Հայաստան ներմուծվող գազի դիմաց 2011 թվականից ձեւավորված պետական պարտքի հիմնավորվածությունը, չափը և դրա մարման օրինականությունը, գազի մեծածախ եւ մանրածախ գների կազմը, կառուցվածքը և դրանց վրա ազդեցություն ունեցող գործոնները: Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու համար հանձնաժողովը, ըստ հեղինակների, կարող էր հարցումներով դիմել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պարզաբանումներ ստանալու համար կարող էր հրավիրել պաշտոնատար անձանց և իր աշխատանքներում ներգրավել փորձագետների, այդ թվում՝ միջազգային: Քառյակն առաջարկում էր հանձնաժողովում ընդգրկել մեկական ներկայացուցիչ յուրաքանչյուր խմբակցությունից և մեկ ներկայացուցիչ խմբակցություններում չընդգրկված պարզամավորներից: Նախատեսվում էր, որ հանձնաժողովի եզրակացությունը Ազգային ժողովին պետք է ներկայացվեր մինչև նստաշրջանի ավարտը: Հարցը քննարկվեց 2 օր և քվեարկությամբ մերժվեց (43 կողմ, 58 դեմ, 3 ձեռնպահ): Մեծամասնությունը հանձնաժողովի ստեղծմանը դեմ էր՝ հիմնավորմամբ, թե կան խնդրի ուսումնասիրման այլ մեխանիզմներ:
- ▲ **«Նաիրիփ» փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման, ստանձնած վարկային պարտավորությունների և անհրաժեշտ ծավալով փոխտեսական գործունեության չիրականացնելու պարձառներն ուսումնասիրող ՀՀ ԱԺ Ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին»** նախաձեռնությունը 5-րդ նստաշրջանի օրակարգում էր 2013թ. սեպտեմբերից (հեղինակը՝ ՀՅԴ): 2014-ի փետրվարին նախագծի ընդգրկումը քառօրյա օրակարգ նախ հետաձգվեց մինչև մեկ տարով, ապա չորսօրյա նիստերի օրակարգ ընդգրկվեց արտահերթ կարգով ոչ իշխանական քառյակի նախաձեռնած ստորագրահավաքի արդյունքում: Ըստ նախաձեռնության հեղինակների՝ «Նաիրիփ» ՓԲԸ պարապուրդը և սահմանափակ ծավալով իրականացված գործունեությունը զգալիորեն ազդել են հանրապետության սույիալ-փոխտեսական վիճակի վրա: Հանձնաժողովը պետք է ուսումնասիրեր գործարանի պարապուրդի պարձառները և մշակեր վերագործարկման հնարավոր փարբերակները: Իշխանությունը դեմ էր հանձնաժողովի ստեղծմանը՝ պարձառաբանությամբ, որ «Նաիրիփի» վերագործարկման շուրջ կառավարությունը բանակցում է ռուսական «Ռոսնեֆտ» ընկերության հետ, և հանձնաժողովի ստեղծումը կարող է անդրադառնալ բանակցությունների ընթացքի վրա: Նախագիծը քննարկվեց և մերժվեց 45 կողմ, 54 դեմ և 1 ձեռնպահ ձայնով:



ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- ▲ **«2008թ. մարտի 1-2-ին Երեւան քաղաքում տասը անձանց սպանությունների, քաղաքացիական անձանց, ոստիկանության աշխատակիցներին ու զինծառայողներին հրազենային ու այլ մարմնական վնասվածքներ պատճառելու դեպքերով ՀՀ ոստիկանության, Հափուկ քննչական ծառայության, ՀՀ գլխավոր դատախազության ձեռնարկած միջոցառումների ու գործողությունների հիմնավորվածության եւ օրինականության հարցը ուսումնասիրող ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին»** նախագիծը (հեղինակը՝ ՀԱԿ) նույնպես շրջանառվում էր 2013 թվականից. մեկ անգամ այն քննարկվել և մերժվել էր 3-րդ նստաշրջանի ընթացքում: Նույն հարցը դարձյալ հնարավոր եղավ ընդգրկել 2014թ. մարտի 10-13-ի քառօրյալի օրակարգ ոչ իշխանական քառյակի նախաձեռնությամբ: Նախագծի հեղինակների պնդմամբ՝ 2008թ. մարտի 1-2-ին կատարված հանցագործություններն ու 10 սպանությունների հանգամանքները մնում են չբացահայտված, դրանցում մեղավոր անձինք՝ անպարիժ, այդ դեպքերով հարուցված քրեական գործերի վարույթները կասեցված չեն, բայց և ակտիվ քննություն չի կատարվում: Հանձնաժողովի խնդիրն էր պարզել 2008թ. մարտի 1-2-ի սպանությունների, հրազենային ու մարմնական վնասվածքների հանգամանքներն ու պատճառները, ուսումնասիրել այդ դեպքերին պետական կառույցների ու պաշտոնատար անձանց ունեցած առնչությունները, գնահատել ոստիկանության, Հափուկ քննչական ծառայության եւ գլխավոր դատախազության գործողությունների եւ որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը: Իշխանությունը ներկայացնող պատգամավորների կարծիքով հարցը ժամանակավրեպ էր և չարժեր նորից բացել մարտի 1-ի փակված էջը: Նախաձեռնությունը մերժվեց (46 կողմ, 65 դեմ, 1 ձեռնպահ):
- ▲ **«Հայաստանի Հանրապետության ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ 2012-2013թթ. ընթացքում արագաչափերի և տեսանկարահանող սարքերի կիրառման, վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման, Երևանի ուղևորափոխադրումների ուղեվարձի հնարավոր թանկացման, չչահագործվող ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության փուլանքների գործադրման ազդեցությունն ուսումնասիրող Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին»** որոշման նախագծի (հեղինակը՝ «Ժառանգություն») նպատակն էր ուսումնասիրել և պարզել, թե որքանով են իրավաչափ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար նախատեսված փուլժերն ու փուլանքները, ինչպես են հարկային բեռի վրա ազդել 2012-2014թթ. ավտոճանապարհներին տեղադրված արագաչափերն ու տեսանկարահանող սարքերը, Երևանում գործող վճարովի ավտոկայանատեղերը: Մարտի 24-ից քննարկման դրված հարցի քվեարկությունը տեղի ունեցավ ապրիլի 28-ի քառօրյալում: Այդ ընթացքում կառավարությունն ինքը հասցրեց համանման մի աշխատանքային խումբ ստեղծել, ինչի մասին էլ խոսեց ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը, երբ հարցը դրվեց քվեարկության: Ըստ նրա՝ քանի որ կառավարությունում այդ խումբն արդեն գործում է, խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովի ստեղծումը կարող է խանգարել դրան: Նախաձեռնությունը մերժվեց (51 կողմ, 62 դեմ):



ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Նստաշրջանի ընթացքում ձևավորված միակ հանձնաժողովը «ՀՀ գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովն» էր: Մերժելով ոչ իշխանական ուժերի համանման առաջարկը՝ ՀՀԿ-ն կոալիցիոն գործընկեր ՕԵԿ-ի հետ նախաձեռնեց և ստեղծեց այդ հանձնաժողովը, որում ընդգրկվեցին նաև ոչ իշխանական խմբակցությունների ներկայացուցիչներ:

Ձևավորված 4 աշխատանքային ենթախմբերը պետք է ուսումնասիրություններ կատարեին հետևյալ ուղղություններով՝ գազամատակարարման բնագավառում սպառողների շահերի պաշտպանություն, 2011-2013 թթ. գազի դիմաց կուտակված պարտքի ձևավորման օրինականություն և հիմնավորվածություն, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում Հայաստանի ունեցած բաժնեմասի գնահատման գործընթաց, բնական գազի այլընտրանքային ներկրման հնարավորություններ, գազի և էլեկտրաէներգիայի սակագների ձևավորում:

Նախատեսվում էր, որ հանձնաժողովը պետք է աշխատեր մինչև նստաշրջանի ավարտը, սակայն հունիսին գումարված արտահերթի ընթացքում ներկայացվեց հանձնաժողովի գործունեության միջանկյալ եզրակացությունը և առաջարկվեց հանձնաժողովի գործունեությունը երկարաձգել մինչև 6-րդ նստաշրջանի ավարտը:

Ուշագրավ փաստեր միջանկյալ եզրակացությունից

- ▲ Հանձնաժողովն արձանագրել է, որ գազի սակագնի բարձրացմանը զուգընթաց բարձրացել է նաև «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի շահույթի ծավալը՝ հազար խմ-ի հաշվարկով շուրջ 12%-ով, և անցած 5 տարիների ընթացքում ունենալով շահույթի կայուն ծավալներ կազմակերպությունը պետությանը չի վճարել շահաբաժիններ:
- ▲ Հանձնաժողովը լուրջ մտահոգություններ ունի գազաբաշխման և փոխադրման ընթացքում գազի կորուստների չափերի գնահատման հարցում և կարծում է, որ վերլուծության կարիք ունի ոչ միայն գազի սակագնի ձևավորումը, այլ նաև սակագնի բարձրացման ազդեցության գնահատումը էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման վրա:
- ▲ Ըստ հանձնաժողովի միջանկյալ եզրակացության՝ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի նաև «ՀայՌուսգազարդ»-ի աշխատողների թվաքանակի շուրջ 1000-ով ավելացումը, աշխատողների միջին ամսական աշխատավարձի շեշտակի աճը՝ 108 հազ. դրամով և բազմաթիվ այլ հարցեր, որոնց ուսումնասիրմամբ հանձնաժողովը նախատեսում է զբաղվել 5-րդ գումարման Ազգային ժողովի 6-րդ՝ աշնանային նստաշրջանի ընթացքում:

Վերահսկելու լծա՞կ, թե՞ իմփայսիա

(փորձագիտական վերլուծություն)

Ազգային ժողովի՝ ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու իրավունքը բխում է իշխանությունների տարանջատման ու հակակշռման, իշխանության մյուս թևերի նկատմամբ պառլամենտի կողմից վերահսկողություն իրականացնելու սկզբունքից:



ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծելու նախաձեռնողականությունը, դրանց նպատակի և խնդիրների համապեքստում գործունեության ամբողջականությունն ու հետևողականությունն այն չափորոշիչներն են, որոնք պայմանավորում են խորհրդարանի ինստիտուցիոնալ անկախությունը:

Մյուս կողմից, ժամանակավոր հանձնաժողովների ձևավորման իրավունքի իրացման հնարավորությունը հասարակական-քաղաքական պրոպեանների, քաղաքական որոշումների վրա ազդելու գործիք է և իբրև այդպիսին՝ ուղղակի կախվածության մեջ է խորհրդարանում առկա քաղաքական ուժերի հարաբերակցությունից և քաղաքական կոնյունկտուրայից:

Պարահական չէ, որ ժամանակավոր հանձնաժողովների ձևավորման նախաձեռնությունը գրեթե միշտ պարկանել է խորհրդարանական փոքրամասնությանը, իսկ մեծամասնության դիրքորոշումը պայմանավորված է եղել քաղաքական նպատակահարմարությամբ և գործադիրից խորհրդարանի կախվածության իրողությամբ: Այդ պարճառով ձևավորված ժամանակավոր հանձնաժողովների գործունեության արդյունքում հայտնաբերված խնդիրները, բացահայտումներն ամփոփող տեղեկանքները, նույնիսկ ապացուցողական լուրջ պրոպեանիալով օժտված լինելու պարագայում, քիչ են հանգեցրել կոնկրետ հետևանքների:

Այսինքն, ձևավորվել է ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման իրավունքը, գործունեության արդյունքները ձևականացնելու, պառլամենտի վերահսկողական գործառնությի առումով դրանց քաղաքական և գործնական նշանակությունը նվազագույնի հասցնելու ընդհանրական մոտեցում: Չնայած այս միտումներն ընդհանուր առմամբ առկա են նաև 5-րդ գումարման ԱԺ-ի 5-րդ նստաշրջանում, սակայն որոշ քաղաքական գործոններով պայմանավորված՝ այս նստաշրջանն առանձնացել է մի քանի իրողություններով.

- ▲ 5 ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու նախաձեռնություններից միայն մեկն է պարկանել խորհրդարանական մեծամասնությանը, այն էլ փոքրամասնության նույնաբովանդակ նախաձեռնությանը հակակշռելու նպատակով:
- ▲ Ժամանակավոր հանձնաժողովների ձևավորման նախաձեռնությունները և դրանց ինտենսիվությունը բխում էին նախորդ կառավարության անարդյունավետությունը հիմնավորելու և վարչապետ Տիգրան Սարգսյանի հրաժարականին հասնելու խորհրդարանական փոքրամասնության փակփիկական նկատառումներից: Դա քաղաքական մոտիվացման ուժեղ ազդակի դեր է կատարել խորհրդարանում: Ժամանակավոր հանձնաժողովների ձևավորումը, դրանց շուրջ քննարկումները հանդիսացան ընդդիմության՝ «ոչ իշխանական քառյակ» պայմանական անվանումն սրացած ձևաչափի միասնականության ինքնաարտահայտման միջոց:



ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

▲ Քառյակը, որպես խորհրդարանական ոչ իշխանական ուժերի ոչ ֆորմալ միավորում, իր ակտիվ գործունեությամբ ստիպեց մեծամասնությանը վերանայել ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման հարցում կիրառվող ավանդական մերժողական մարտավարությունը: Մերժողականությունը փոխարինվեց չափավոր հանդուրժողականությամբ և կառավարելիություն ապահովող մոտեցմամբ: Կոնսենսուսային լուծումների հնարավորությունը դրսևորվեց հատկապես մեծամասնության ներկայացրած՝ «գազամատակարարման ոլորտի և պարտքերի կուտակման հիմնավորվածությունն ուսումնասիրող» հանձնաժողով ստեղծելու որոշման նախագծի շուրջ քննարկումներում: Նախաձեռնության հեղինակները գնացին զիջումների՝ ընդունելով նախ սպառված գազի դիմաց կուտակված պարտքերի օրինականությունը ևս հանձնաժողովի ուսումնասիրության առարկա դարձնելու, և երկրորդ՝ հանձնաժողովի գործունեության ժամկետը 9 ամսվա փոխարեն 3 ամիս դարձնելու փոքրամասնության առաջարկությունները: Այդ զիջումների արդյունքում ոչ իշխանական ուժերը համաձայնեցին աշխատել հանձնաժողովում:

▲ Խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունը ևս կարող էր ազդել ժամանակավոր հանձնաժողովների գործունեության վրա, եթե մեծամասնությունը շրապ կերպով չփոփոխեր համապատասխան որոշման նախագիծը: ՕԵԿ-ի՝ ընդդիմադիր դառնալու մասին հայտարարությունից հետո 10 անդամից բաղկացած «գազի» հանձնաժողովում քաղաքական մեծամասնությունը մնաց ընդամենը 4 անդամով՝ նախկին 6-ի փոխարեն, ու դրա համար որոշեց, որ 10-ի փոխարեն հանձնաժողովը կունենա 12 անդամ, որտեղ դարձյալ 6-ը կլինի ՀՀԿ-ական:

Այսպիսով՝ խորհրդարանն այս նստաշրջանում գերքաղաքականացված մոտեցում ցուցաբերեց ժամանակավոր հանձնաժողովների միջոցով իր վերահսկողական լիազորությունները կատարելու գործառույթի նկատմամբ: Առանձնահատկությունները, որոնք դրսևորվեցին նստաշրջանի ընթացքում, առայժմ որևէ միտում չեն նախանշում և պայմանավորված են օրվա քաղաքական հանգամանքներով:

Բյուջեի կատարողականի հաշվետվությունը

2014թ. հունիսի 12-ին ձայների 67 կողմ, 40 դեմ, 5 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունվեց «2013 թ. պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» ԱԺ որոշումը: Փաստաթղթին կողմ քվեարկեց միայն «Հանրապետական» խմբակցությունը, ՕԵԿ-ը ձեռնպահ էր, խորհրդարանական մյուս խմբակցությունները՝ դեմ. ոչ իշխանական 4 ուժերը դիրքորոշումը հիմնավորեցին 2013թ. բյուջեի համանման քվեարկությամբ: Նախորդ տարվա բյուջեն կազմել և իրականացրել էր հաշվետվության քննարկումից մոտ 2 ամիս առաջ հրաժարական տված Տիգրան Սարգսյանի կառավարությունը:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Այս հանգամանքը «նեղացրեց» Հովիկ Աբրահամյանի կառավարության պարասխանաարվության շրջանակը, իսկ խորհրդարանական ոչ իշխանական ուժերի համար պատեհ առիթ դարձավ ևս մեկ անգամ անդրադառնալու նախորդ վարչապետի ու կառավարության գործունեությանը: Նիստերի դահլիճում ծավալված քննարկումը ոչ այնքան փաստաթղթի հիմնական ցուցանիշների շուրջ էր, որքան Տիգրան Սարգսյանի կառավարության տնտեսական քաղաքականության ձախողումների: 2013-ին տնտեսական աճը կազմել է 3,5%՝ նախատեսված 6,2%-ի փոխարեն, մինչդեռ, ըստ ներկայացված փաստաթղթի, Բյուջե 2013-ով նախանշված ցուցանիշները կատարվել են գրեթե հարյուր տոկոսով:

Տեղեկանք: Ըստ հաշվետվության՝ 2013թ. պետական բյուջեի եկամուտները կազմել են 1 տրիլիոն 71 մլրդ դրամ (կատարողականը՝ 99, 8 տոկոս): 2013 թվականի հարկային եկամուտների եւ պետական տուրքերի տարեկան ծրագիրը կատարվել է 100 տոկոսով, այլ եկամուտների կատարողականը գերազանցել է նախատեսված ցուցանիշը 8,2 տոկոսով: Պաշտոնական դրամաշնորհների մասով արձանագրվել է 66,2 տոկոս կատարողական:

Ծախսերը նախորդ տարում նախատեսվել էին 1 տրիլիոն 153 մլրդ դրամի չափով, սակայն տարվա ընթացքում ավելացել են 109,6 մլրդ դրամով կազմելով 1 տրիլիոն 258 մլրդ դրամ: Ծախսային մասի կատարողականը կազմել է 90,8 տոկոս: 2012 թվականի համեմատ՝ 2013 թվականին ծախսերն ավելացել են 2,2 տոկոսով կամ 6,4 մլրդ դրամով: Արտաքին պարտքի սպասարկման նպատակով հատկացվել է 25 մլրդ դրամ: Նախորդ տարում պետական բյուջեի պահուստային ֆոնդից օգտագործվել է 43,2 մլրդ դրամ: 2012 թվականի համեմատ՝ 2013 թվականին պետական բյուջեի պակասուրդն ավելացել է 19,4 տոկոսով: Ըստ այդմ հաշվետու տարում պետական բյուջեի պակասուրդը կազմել է 71,5 մլրդ դրամ:

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի արտաքին պետական պարտքը կազմել է 3 մլրդ 899 մլն ԱՄՆ դոլար կամ համախառն ներքին արդյունքի 37,1 տոկոսը: Ըստ կառավարության՝ այս ցուցանիշը մտահոգիչ չէ. գնահատման միջազգային չափանիշներով Հայաստանը դասվում է նվազ պարտքի բեռ ունեցող երկրների շարքում:

Կառավարության երրորդ ծրագիրը. իրատեսական զգուշավորության և ավանդական հռչակագրայնության միջև

(փորձագիտական վերլուծություն)

5-րդ գումարման Ազգային ժողովը գործունեության 2 տարիների ընթացքում երեք անգամ կառավարության ծրագիր է հաստատել: Առաջին երկուսը համապետական՝ 2012թ. խորհրդարանական և 2013թ. նախագահական ընտրություններից հետո, երրորդը՝ 5-րդ նստաշրջանում պայմանավորված վարչապետ Տիգրան Սարգսյանի հրաժարականից հետո նոր կաբինետի ձևավորմամբ:



ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ենթադրելի էր, որ կառավարության նոր ծրագիրը պետք է շեշտադրումներով և նպատակադրումներով էականորեն փոխարկեր նախորդներից:

Սակայն ԱԺ ներկայացված փաստաթուղթը ոչ միայն ժառանգել էր նախորդների դեկլարատիվ բնույթը, այլև ավելի հարստացել ընդհանրական հասկացություններով ու ձևակերպումներով: Եթե նախորդ ծրագրերում առկա հռչակագրայնությունը որոշակիորեն փոխհատուցվում էր հավակնոփ, խոշորամասշտաբ նախագծերի նախատեսմամբ, ապա նոր կառավարության ծրագիրն ընդգծված չափավոր է, նույնիսկ զգուշավոր:

Դրա մասին է վկայում ծրագրում կոնկրետ ցուցանիշների սակավությունը, գրեթե բացակայությունը: Սահմանված է ընդամենը երեք կոնկրետ ցուցանիշ. տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի միջնաժամկետ՝ 5 տոկոս աճի միջոցով, երեք տարվա ընթացքում նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացում մինչև 65000 դրամ, և աղքատության կրճատման ապահովում 10 տոկոսային կետով: Կառավարությունը կարևորում է նաև 2018 թվականից լիարժեք ծրագրային բյուջեփորման անցնելու, ինչպես նաև համահայկական ներդրումային հիմնադրամ ստեղծելու մասին ծրագրային դրույթները: Այս մոտեցումը փաստաթուղթը դարձնում է իրավիճակի հնարավոր փոփոխությունների նկատմամբ հարմարվողական, իսկ չափումների ենթարկելու իմաստով՝ ավելի էլաստիկ:

Մասնավորապես, ծրագրում որպես փոքր և միջին ձեռնարկատիրության խթանման միջոց առաջ են քաշվում սկսնակ գործարարներին «առանձնահատուկ» աջակցություն ցուցաբերելու, մարզերի սկսնակ գործարարների համար «բացառիկ ձկուն» մոտեցումներ կիրառելու, ՓՄՁ սուբյեկտների համար պետական աջակցության «նոր ուղղություններ ներդնելու» գաղափարները: Սակայն չեն հստակեցվում ոչ սկսնակ գործարարներին ցուցաբերվելիք աջակցության առանձնահատկությունները, ձևերը, ոչ ձկուն մոտեցումների բացառիկության հնարավոր դրսևորումները, ոչ էլ այն կառուցակարգերը, որոնք ամբողջացնելու են խոստացվող՝ ՓՄՁ-ներին պետական աջակցության այդ նոր ուղղությունները:

Չնայած առանձին ոլորտներում (արդարադատություն, կոռուպցիայի դեմ պայքար, գյուղատնտեսություն, կենսաթոշակային պարտադիր կուտակային բաղադրիչի վերանայում) որոշակի նոր գաղափարների ներգրավմանը, ծրագիրը ընդհանուր քաղաքականության ինստիտուցիոնալ փոփոխություններ, նոր բարեփոխումներ չի նախանշում: Օրինակ, ընդգծելով «տնտեսական միջավայրի առկա խեղաթյուրումների դեմ կտրուկ և հետևողական քայլեր ձեռնարկելու» անհրաժեշտությունն ու պարտապահականությունը՝ կառավարությունը չի հստակեցնում, թե որոնք են այդ խեղաթյուրումները, դրանց պարձառներն ու տեսանելի հետևանքները:



ԱԺ ՎԵՐԱՀՍԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրում գործադիրը կենտրոնանում է երեք հիմնական առաջնահերթությունների վրա.

- ▲ ստվերային տնտեսության կրճատում՝ վարչարարության վերանայման և մրցակցային տնտեսավարման պայմաններ ստեղծելուն ուղղված խաղի նոր կանոններ սահմանելու միջոցով, ինչպես նաև փոքր և միջին գործարար հափվածից հարկային բեռի աստիճանական տեղափոխում դեպի խոշոր բիզնես: Ծրագրում արտապուլված չեն, սակայն, այս հիմնահարցերի լուծման ինստիտուցիոնալ հիմքերը: Շեշտը դրվում է ոչ թե այդ նպատակին ծառայող մեխանիզմների, մեթոդների և իրավական կարգավորումների ամբողջականացման, այլ քաղաքական կամքի, խոստումների և անձնական հարաբերությունների վրա.
- ▲ կոռուպցիայի դեմ պայքար, որի առանցք է դիտարկվում բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկական վարքագծի և շահերի բախման ինստիտուտի կափարելագործումն ու պետական ծառայողի նոր կերպարի ձևավորումը: Հստակ չէ, սակայն, թե առանց պետական ծառայողների մոտիվացիոն համապատասխան գործիքակազմ կիրառելու՝ ինչպես է լուծվելու այդ կերպարի ձևավորման հարցը: Բացահայտված չէ նաև, թե որքանով է շահերի բախման ինստիտուտի կափարելագործումը դիտարկվում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործառնական նշանակությունը բարձրացնելու, նրա վերահսկողական գործառնություններն ընդլայնելու համատեքստում.
- ▲ ելակետային նշանակություն է տրվում սահմանադրական բարեփոխումների իրականացմանը: Կայուն տնտեսական միջավայրի պահպանման խնդիրն ուղղակիորեն պայմանավորվում է այդ բարեփոխումների քաղաքական ազդեցությամբ, ինչը տնտեսական համակարգում առկա բացասական երևույթներն իրավական անկատար կարգավորումներով պայմանավորելու դրսևորում է:

Խորհրդարանում կառավարության ծրագիրը քննարկվեց առավելապես դրա քաղաքական նշանակության համատեքստում: Հիմնական քննադատությունն ուղղված էր ոչ այնքան ծրագրի բովանդակությանն ու կառուցվածքին, որքան նոր կառավարության ձևավորման սկզբունքներին: ՀՅԴ-ի, «Ժառանգության» և ԲՀԿ-ի համար սկզբունքային էր ընդդիմությունը վերահսկողական լծակներ տրամադրելու առաջարկը մերժելու հանգամանքը, ՀԱԿ-ի համար՝ կադրային վերադասավորումներում շահերի բախման սկզբունքի անտեսումը, ՕԵԿ-ի համար՝ իշխանության կողմից նախկին կառավարության հրաժարականի պատճառները չներկայացնելը: Մինչդեռ ՀՀԿ-ն նոր կառավարության ներկայացրած ծրագրի չափավորությունն ու ոչ հավակնոտությունը որակեց իրատեսական այն նույն հիմնավորումներով ու ջերմեռանդությամբ, որոնցով ողջունել էր նախորդ կառավարության թեև հռչակագրային, բայց ավելի հավակնոտ ու ցուլանիշներով փոքր-ինչ հազեցած ծրագրերը:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Ազգային ժողովի 5-րդ գումարման 5-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է 143 օրենք, 13-ը «մայր» օրենքներ են, իսկ 130-ը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 136-ի հեղինակը ՀՀ կառավարությունն է, և միայն 7-ինը՝ ԱԺ պատգամավորները:

Օրենքների կեսից ավելին՝ 77-ը, ընդունվել է արտահերթ նստաշրջանների ընթացքում: 3 փասնյակից ավելի օրինագծեր՝ մի քանի հարյուր էջ ընդհանուր ծավալով, օրենք դառնալու ճանապարհը խորհրդարանում սկսել են հունիսյան արտահերթի առաջին օրը (հունիսի 18) և 4-րդ օրն արդեն դարձել են ընդունված օրենքներ:

Ամենավիճահարույց օրենսդրական փաթեթները՝ կուրակային կենսաթոշակների (11 օրինագիծ) և շրջակա միջավայրի (3 օրինագիծ) մասին, բոլոր 3 ընթերցումներն անցել են ռեկորդային ժամանակահատվածում՝ մեկ օրում:

Ընդունված օրենքներից 54-ը վերաբերում է պետափրավական ոլորտին, 41-ը՝ սոցիալ-տնտեսականին, 18-ը՝ պաշտպանությանը, 14-ական օրենք վերաբերում է գյուղատնտեսության և կրթության ոլորտներին:

Ստորև ներկայացվում են գարնանային նստաշրջանի ընթացքում ընդունված մոտ մեկ փասնյակ օրենքների դիֆարկման արդյունքները: Ընտրությունը կատարվել է՝ օրենքների հանրային հնչեղությունը և դրանց նկատմամբ հասարակական հեղափոխությունը հաշվի առնելով: Դիֆարկվել են սոցիալական, իրավական, հարկային, բնապահպանական ոլորտներին և ՋԼՍ-ների գործունեությանն առնչվող օրենսդրական փաթեթների ընդունման գործընթացները, ինչպես նաև այս խնդիրների արժարժումը խորհրդարանական ուժերի քաղաքական ծրագրերում՝ քվեարկությամբ արտահայտված դիրքորոշումների ու ծրագրային մոտեցումների համադրմամբ:

Կուրակային կենսաթոշակային համակարգի ողիսականը

5-րդ գումարման ԱԺ 5-րդ նստաշրջանն անցավ պարտադիր կուրակային կենսաթոշակային համակարգի վերափոխումների շուրջ իրավաքաղաքական զարգացումների, պառլամենտի, քաղաքական մեծամասնության և առհասարակ իշխանության նկատմամբ հասարակական-քաղաքական աննախադեպ ճնշման համարեքստում: Պարտադիր կուրակային համակարգը ուժի մեջ էր մտել 2014 թ-ի հունվարի 1-ից, բայց խնդրի հանգույցալուծումը դեռևս մի ողջ կիսամյակ պետք է անցներ մի քանի լրջագույն փուլեր:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկանք. «Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքով նախատեսված կենսաթոշակային պարտադիր կուրակային բաղադրիչի սահմանադրականությունը պարզելու նպատակով 2013թ. դեկտեմբերին ԱԺ չորս ոչ իշխանական ուժերը դիմեցին Սահմանադրական դատարան: Հունվարի 21-ին ՍԴ-ն ընդունեց աշխատակարգային որոշում պարտադիր բաղադրիչի կիրառումը ժամանակավորապես, մինչև ՍԴ կողմից հարցի քննարկումն ու վերջնական որոշման կայացումը, կասեցնելու մասին: ՍԴ որոշման ձևակերպումներում առկա անորոշությունները փարբեր մեկնաբանությունների և քաղաքական շահարկումների տեղիք տվեցին, միաժամանակ ակնհայտ էր համակարգը ցանկացած գնով ներդնելու կառավարության ցանկությունը:

Ապրիլի 2-ին ընդունված ՍԴ որոշմամբ օրենքի «Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքի բազմաթիվ դրույթներ ձանաչվեցին հակասահմանադրական, բայց դրանց ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանվեց ընթացիկ փարվա սեպտեմբերի 30-ը, իսկ մինչև որոշումն իրականացված բոլոր կուրակային վճարումները համարվեցին ենթակա վերահաշվարկի: ՍԴ որոշման առանցքում այն մտնում էր, որ «Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքի մի շարք դրույթներ չեն բխում սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման՝ քաղաքացու իրավունքից:

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

Որքան էլ ՍԴ որոշումը միանշանակ էր և պարտադրում էր կառավարությանը սկզբունքորեն փոխել ներդրվող համակարգը, այնուամենայնիվ, զերծ չէր իրավական և քաղաքական մեկնաբանությունների տեղիք տվող հասկացություններից ու ձևակերպումներից, որոնք թույլ տվեցին եզրակացնել, որ ՍԴ-ն փորձում է մի կողմից պարտադիր կուրակային բաղադրիչի ներդրման հիմքեր ապահովել, մյուս կողմից՝ ուղղորդել կառավարությանը սույնիսկան քաղաքականություն իրականացնելու հարցում: ՍԴ-ն անորոշ էր թողնում նաև 2014թ. հունվարի 1-ից մինչև իր ընդունած որոշման ուժի մեջ մտնելու պահը փոխանցված կուրակային վճարների վերադարձման հարցը:

Ապրիլի 3-ին վարչապետ Տիգրան Սարգսյանի և կառավարության հրաժարականից հետո պարտադիր կուրակային կենսաթոշակային համակարգի ներդրման պետական քաղաքականության իրականացումը փոխանցվեց նորանշանակ վարչապետին: Հովիկ Աբրահամյանը շրջանառության մեջ դրեց այսպես կոչված «պարտադիր, բայց ոչ պարտադրված» բանաձևը: Այս ձևակերպման էությունը պարտադիր կուրակայինից չհրաժարվելու և համակարգի հիմքում շահառուների կամավորության սկզբունքը կիրառելու ինչ-որ հիբրիդային մոդել ստեղծելն էր: Գործադիրի «նոր» մտնելումը պայմանավորված էր ոչ միայն ՍԴ որոշման կատարման հրամայականով, այլ նաև պարտադիր կուրակային բաղադրիչի կիրառման դեմ հասարակական-քաղաքական լուրջ և չնահանջող ընդվզմամբ:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկանք. «Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն նախատեսող օրինագիծն ընդունվեց ԱԺ մայիսի 13-ի արտահերթ նիստում (68 կողմ, 12 դեմ, 36 ձեռնպահ): Այն, ըստ էության, միջանկյալ տարբերակ էր, որով, մինչև օրենսդրությունը ՍԴ որոշմանը վերջնականապես համապատասխանեցնելը գործադրում ազատվում էր կուրակային վճարները հաշվարկելու և փոխանցելու պարտականությունից՝ համաձայն վճարումներ կատարելուց հրաժարվելու մասին աշխատողի դիմումի: Երկրորդ սկզբունքային զիջումը կուրակային վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու դեպքում գործադուներին փոյժերից ազատելն էր: Դրանով, ըստ էության, կառավարությունը ոչ թե հրաժարվում էր կենսաթոշակային պարտադիր կուրակային բաղադրիչից, այլ խնդիրը թողնում էր գործադու-աշխատող հարաբերությունների դաշտում:

Գտնված միջանկյալ լուծումը նախատեսում էր այսպես կոչված «պարտադիր կամավորության» սկզբունքով գործող մեխանիզմ, երբ դե յուրե պարտադիր կուրակային համակարգին միանալու իրավունքը վերապահվում է քաղաքացուն, սակայն դե ֆակտո վերջինս հայտնվում է գործադուի հայեցողության դաշտում: Եթե մասնավոր հատվածում սա կարող էր որևէ խնդիր չհարույցել, ապա պետական և բյուջեային համակարգի աշխատողները պարտադիր կուրակային վճարումներ կատարելուց հրաժարվելու դիմումներ ներկայացնելու պարագայում կարող էին ենթարկվել ստվերային ճնշումների: Բոլոր դեպքերում, այս լուծումն առաջին հերթին ուղղված էր պարտադիր բաղադրիչի դեմ հասարակական և քաղաքական լարվածությունը մեղմելուն:

Հունիսի վերջին, չսպասելով ՍԴ որոշմամբ սահմանված ժամկետի ավարտին, կառավարությունը ԱԺ ներկայացրեց օրենսդրական ծավալուն փաթեթ՝ ուղղված կուրակային կենսաթոշակային համակարգը ապրիլի 2-ի որոշմանը համապատասխանեցնելուն: Փաթեթը քննարկվեց հատուկ ընթացակարգով արտահերթ նստաշրջանի ընթացքում, ընդունվեց ռեկորդային արագությամբ (3 ընթերցում՝ 1 օրում) և խնդրահարույց քվեարկությամբ:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

21.06.2014թ. ընդունված օրենսդրական փաթեթը Ազգային ժողով ներկայացվել և օրակարգ է մտել առանց օրենքով նախատեսված գործողությունների, այդ թվում՝ հանրային քննարկումների, փորձաքննությունների և համապատասխան եզրակացությունների, չի կատարվել փոփոխություն 2014 թ. պետական բյուջեի մասին օրենքում: Այն դեպքում, որ հանրային իրազեկվածության խնդիրը կարևորել էր նաև ՀՀ Սահմանադրական դատարանը 24.01.2014թ ՍԴԱՌ-3 աշխատակարգային որոշմամբ՝ «...կուրակային կենսաթոշակների համակարգի կիրառման հաջողությունը մեծապես պայմանավորված է այդ համակարգի նկատմամբ բնակչության պատշաճ իրազեկվածությամբ ու վստահությամբ»: Ուստի՝ օրենքների ընդունման համար սահմանված կարգի խախտմամբ ընդունված օրենքները չեն կարող համարվել իրավական որոշակիության, պատշաճ «օրենքի որակ» սահմանադրական սկզբունքներին համապատասխանող:

Նոր խմբագրմամբ 30.12.2010թ. ՀՕ-244-Ն օրենքը բացարձակապես նոր՝ այլ օրենք է, սակայն ներկայացվում է որպես ինկորպորացիա, պահպանելով միայն ընդունման փարեթիվը, հերթական համարը և վերնագիրը:

Տեղեկանք. 11 օրենքներում փոփոխություններ ենթադրող փաթեթով կենսաթոշակային ֆոնդեր փոխանցվող պարտադիր կուրակային վճարը փոխարինվում է պետբյուջե փոխանցվող նպատակային սուբսիալական վճարով: Սուբսիալական վճարի դրույքաչափը հաշվարկվում է նախկին կարգով, սակայն սահմանվում է սուբսիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն շեմ՝ 500 հազար դրամ: Պահպանվում է նաև պետական մասնակցության առավելագույն շեմը՝ ամսական 25 հազար դրամ: Ըստ փաթեթի՝ սուբսիալական վճարի հաշվարկման օբյեկտի առավելագույն շեմը ենթակա է լինելու փոփոխման 2019 թվականից՝ միջին աշխատավարձի չափի աճին համապատասխան: Սահմանվում է նաև, որ նվազագույն աշխատավարձ ստացողների համար սուբսիալական վճարը կատարում է գործատուն: Մյուս նորամուծությունն այն է, որ կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների ռիսկերի կառավարման համակարգին ներկայացվող պահանջները, ինչպես նաև կենսաթոշակային ֆոնդի ակտիվների ներդրումների քանակային և արժութային սահմանափակումները սահմանվում են օրենքով: Համակարգը պարտադիր կարգով գործարկվում է պետական հարվածի աշխատողների համար: Մասնավոր հարվածի աշխատողները մինչև 2017թ. հունվարի 1-ը համակարգին կարող են միանալ կամավորության սկզբունքով: Դրանից հետո նաև մասնավոր հարվածի համար համակարգը կդառնա պարտադիր:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Որդեգրված մուտեցումը ցույց տվեց, որ քաղաքական իշխանությունը չի հրաժարվել կենսաթոշակային պարտադիր կուտակային բաղադրիչը կիրառելու մտադրությունից՝ ընտրելով այն փուլային եղանակով իրականացնելու տարբերակը: Հենց այս հանգամանքն էլ դարձավ խորհրդարանական փոքրամասնության կողմից օրենսդրական փաթեթը սկզբունքորեն մերժելու հիմնական պատճառներից մեկը: Ըստ ոչ իշխանական ուժերի՝ փոփոխությունները միավաճ են պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի պահպանմանը, և նոր հասկացությունների ներմուծումն ու ձևական, արտաքին փոփոխությունները չեն փոխում համակարգի հակասահմանադրական էությունը: Խորհրդարանական ուժերի՝ դեմ արտահայտվելու մյուս առանցքային պատճառը փաթեթն արտահերթի ռեժիմով քննարկելու և ցանկացած գնով անցկացնելու քաղաքական մեծամասնության ընտրած մարտավարությունն էր: Կառավարությունը փաստացի չէր պահպանել փաթեթը հանրային քննարկման առարկա դարձնելու 15-օրյա ռեժիմի պահանջը և այն պարզաձև կերպով նախապես չէր ներկայացրել ԱԺ պատգամավորներին և խմբակցություններին:

Մյուս կողմից՝ ընթացակարգը, որով ընդունվեց փաթեթը, առհասարակ կասկածի տակ դրեց դրա լեգիտիմությունը: Քվեարկությունից հետո (66 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) ոչ իշխանական ուժերը պնդում էին, որ արձանագրվել են բացականչելի փոխարեն քվեարկելու դեպքեր, քանի որ դահլիճում ներկա ՀՀԿ-ականների թիվը՝ 64, չէր բավարարի պարզ մեծամասնությամբ փաթեթն ընդունելու համար: Այս իրողությունները սրվեցին ոչ միայն վերոնշյալ փաթեթի, այլև ընդհանրապես հունիսյան արտահերթի ընթացքում քննարկված օրինագծերի ընդունումը:

Կենսաթոշակային բարեփոխումների խնդիրը նախընտրական ծրագրերում

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ողիսականը արդյունավետ և քաղաքացիների շահերից բխող համակարգի շուրջ քննարկումների փոխարեն ուղեկցվեց քաղաքական դիմակայությամբ՝ իշխանության և ընդդիմության միջև: ՀՀԿ-ական մեծամասնությունը համառոտ էր պարտադիր կուտակային բաղադրիչն անցկացնելու հարցում (որը նրա նախընտրական ծրագրի բաղադրիչներից մեկն էր), իսկ ոչ իշխանական ուժերը ընդդեմ քաղաքական մեծամասնության դիրքորոշումների ու գործողությունների միասնականությունն էին ապահովում՝ անտեսելով սեփական ծրագրային մուտեցումները: ԲՀԿ-ի և «Ժառանգության» պարագայում այս քաղաքականացված կեցվածքը կարելի է պայմանավորել կենսաթոշակային համակարգի բարեփոխումների հարցում ծրագրային դիրքորոշում չունենալու հանգամանքով, մինչդեռ ՀԱԿ-ը և ՀՅԴ-ն, ըստ ծրագրերի, կենսաթոշակային խառը համակարգի կամ բաշխողականից կամավոր կուտակայինին փուլային անցում կատարելու կողմնակից են: Բայց եթե ՀՅԴ-ն փորձում էր կառավարության և ԱԺ մեծամասնության հետ երկխոսության միջոցով պարտադիր բաղադրիչից հրաժարվելու և կամավոր համակարգին անցնելու կոնսենսուսային լուծումներ



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

գտնել, ապա ՀԱԿ-ն ընդհանրապես հակված չէր որևէ հարցում բանակցելու իշխանության հետ: Իսկ ՕԵԿ-ը, մինչև ապրիլ կաշկանդված լինելով կոալիցիայի անդամ լինելու հանգամանքով, դրսևորեց ընդգծված պասիվություն, չնայած ծրագրով առաջարկում է ոլորտի արմատական բարեփոխում՝ կուրակային ապահովագրական համակարգի ներդրման ճանապարհով:

Գործարար միջավայրի սոցիալական պատասխանատվությունը. հարկային փոփոխություններ

Հազվադեպ է պատահում, որ խորհրդարանը քննարկման առնի օրենսդրական նախաձեռնություններ, որոնք ուղղակիորեն կամ առաջին պլանով առնչվում են հասարակության որոշակի շերտի և գործարար միջավայրի սոցիալական պատասխանատվությանը: Դիտարկվող նստաշրջանում Ազգային ժողովը քննարկել և ընդունել է նման երկու օրենք՝ փոփոխություններ կատարելով «Ակցիզային հարկի մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքներում:

Շքեղության հարկ. «Ակցիզային հարկի մասին» օրենքում կատարված փոփոխությամբ (22.05.2014թ.) վերացվեց 2012թ.-ից կիրառվող ակցիզային, այսպես կոչված «շքեղության» հարկը, որը վերաբերում էր 25 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 փարի թողարկման փարեթիվ և 4500 սմ³ ու ավելի շարժիչի աշխարանքային ծավալ ունեցող թեթև մարդափար ավտոմեքենաներին:

Ըստ հեղինակների՝ «Ակցիզային հարկի մասին» օրենքում 2011-ին կատարված փոփոխությունների կիրառման արդյունքում «զգալիորեն նվազել են «շքեղության հարկով» հարկվող ավտոմեքենաների ներկրման ծավալները եւ ՀՀ պետական բյուջե մուտքագրվող գումարները»: Հաշվի առնելով, որ փյալ հարկատեսակով սահմանված մեխանիզմը չի ծառայել իր նպատակին՝ պարզամավորներն առաջարկում էին հանել թեթև մարդափար ավտոմեքենաների համար սահմանված ակցիզային հարկը: Կառավարությունը, որը շատ ավելի վաղ էր տեսակետ արտահայտել «շքեղության» հարկի անարդյունավետության մասին, դրական եզրակացություն էր փոխել պարզամավորների օրինագծին:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

Օրենսդրական այս վերանայումը պայմանավորված էր ի սկզբանե «շքեղություն» կամ «հարստություն» եզրույթի իմաստը միփոմնավոր նեղացնելու և բացառապես շքեղ ավտոմեքենաների ներկրման հետ նույնացնելու հանգամանքով: Մինչդեռ այլընտրանքային նախագծերում, որոնք ավելի վաղ մերժվել էին գործադիր կողմից, նախատեսվում էր շքեղության հարկատեսակ կիրառել որոշակի շեմից բարձր արժեք ունեցող հողամասերի, բնակարանների, առանձնատների, ավտոմեքենաների, ուղղաթիռների, ինքնաթիռների, մոտորանավակների, առազաստանավերի, դրամական միջոցների, արժեթղթերի և այլ թանկարժեք իրերի վրա՝ որպես հարստության կամ շքեղության արտահայտություն: Շեշտադրումը կատարելով այս հարկատեսակի սահմանման ֆիսկալ արդյունքի վրա՝ անտեսվեց նման կապիտալի փորձաքննող սուբյալական շրջանակների կողմից հանրության առջև սուբյալական պատասխանատվություն կրելու նշանակությունը: Գործարարության հետ առնչություն ունեցող պատգամավորները, որոնք հեղինակել են նախագիծը, ոչ թե խնդիր էին դրել օրենսդրական լուծումները համապատասխանեցնելու այդ նշանակությանը, այլ ձերբազարվելու սուբյալական պատասխանատվությունից: Մինչդեռ այն ոչ թե սիմվոլիկ նշանակություն ուներ, այլ գործիք էր՝ թուլացնելու հասարակության սուբյալական բևեռացվածությունը: Մյուս կողմից՝ շքեղության կարեգործիային դասվող գույքի, ունեցվածքի հարկումն ուղղակիորեն պայմանավորված է գույքի և եկամուտների հայտարարագրմամբ: Եթե դրանք չեն հարկվում, քիչ է հավանականությունը, որ կհայտարարագրվեն:

Պարտադիր աուդիտի վերացում. «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքում կատարված փոփոխությամբ (20.05.2014թ.) վերացվեց պարտադիր աուդիտի պահանջը խոշոր համարվող այն տնտեսավարող սուբյեկտների համար, որոնք ունեն 1 մլրդ դրամի և ավելի շրջանառություն կամ ակտիվների հաշվեկշռային արժեք: Աուդիտի անցկացումն այլևս թողնվում է կազմակերպությունների հայեցողությանը: Մինչ այս փոփոխությունները խոշոր ընկերությունները պարտավոր էին հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները աուդիտի եզրակացությամբ: Ըստ կառավարության հիմնավորումների՝ աուդիտորական ծառայությունների գները այս ինստիտուտի ներդրումից հետո էականորեն բարձրացել են՝ ֆինանսական լուրջ բեռ դառնալով խոշոր տնտեսավարողների համար: Առաջարկվում էր թեթևացնել խոշոր բիզնեսի ֆինանսական բեռը՝ պարտադիր աուդիտի պահանջը վերացնելով:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

Փաթեթը հեղինակել է ՀՀ կառավարությունը՝ այն հիմնավորելով բիզնեսի համար լրացուցիչ ֆինանսական բեռ չձևավորելու և այսպես կոչված հորիզոնական մոնիթորինգի մեխանիզմին առաջնահերթություն տալու նպատակով: Եթե կազմակերպությունները հարկային մարմինների հետ աշխատում են թափանցիկ, չեն հայտնվում ուժեղ վերահսկողության ռեժիմում:

Փաթեթի տրամաբանությունը հակասում է բիզնես գործունեության հավասար, մրցակցային պայմանների ապահովման, փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման գաղափարին, թուլացնում է անկախ աուդիտի միջոցով խոշոր գործարարության նկատմամբ պետական վերահսկողության լծակները, հանրային հաշվետվողականության, ինչպես նաև որակյալ հաշվապահական հաշվառման իրականացման մակարդակը: Մտածելով խոշոր ձեռնարկատիրությունը ֆինանսական լրացուցիչ բեռից ազատելու անհրաժեշտության մասին՝ կառավարությունն անտեսում է այդ բեռը նաև փոքր ու միջին բիզնեսի վրա չթողնելու, այդպիսով առնվազն տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու խնդիրը:

Խնդիրը ԱԺ խմբակցությունների ծրագրերում

Տեղեկանք: «Ակցիզային հարկի մասին» օրենքում փոփոխություն նախատեսող օրինագիծն ընդունվեց ձայների 71 կողմ, 31 դեմ հարաբերակցությամբ: Նախագծին կողմ քվեարկեց ՀՀԿ խմբակցությունը, ՕԵԿ-ը չմասնակցեց քվեարկությանը, մյուս 4 խմբակցությունների՝ նիստին ներկա պարզամավորները քվեարկեցին դեմ: Ուշագրավը «Բարգավաճ Հայաստան»-ի «դեմ» քվեարկությունն է: Խմբակցությունը չի պաշտպանել օրենսդրական այն նախաձեռնությունը, որի հեղինակներից մեկը ԲՀԿ-ական պարզամավոր է:

«Հաշվապահական հաշվառման մասին» օրենքում փոփոխություն նախատեսող օրենսդրական փաթեթն ընդունվեց ձայների 100 կողմ, 15 դեմ հարաբերակցությամբ: Օրենսդրական փաթեթի հեղինակը կառավարությունն էր: Կողմ քվեարկեցին ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն ու ՕԵԿ-ը, դեմ ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները:

ԱԺ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում հասարակության հարուստ խավի, խոշոր բիզնեսի սոցիալական պատասխանատվության խնդիրը հիմնականում առաջնային չէ: Բայց բոլոր ծրագրերում ՓՄՁ ոլորտի զարգացման, ինչպես նաև խոշոր, հարկապես օլիգոպոլ բնույթ ունեցող գործունեությունը հարկաբյուջեային քաղաքականության հիմնական թիրախ դարձնելու խնդիրներն արդիական են:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԿ. «100 քայլ» ծրագրի շրջանակում սկզբունքային է համարվում հարկային բեռի հավասարաչափ բաշխման սկզբունքի գործնական կիրառումը: Սրվերի վերապումը համարվում է հարկային և մաքսային համակարգի զարգացման առանցքային գրավականներից մեկը: Տնտեսավարող խոշոր կազմակերպություններում պարտադիր աուդիտի անցկացման պահանջի վերապումն այս իմաստով հակասում է ՀԱԿ-ի ծրագրային մոտեցումներին: Փաթեթի նկատմամբ բացասական դիրքորոշումը խմբակցությունը հիմնավորել է ոչ միայն ՓՄՁ-ներին բիզնեսի վարման անհավասար ոչ արդարացի դաշտ մղելու, այլև կոռուպցիոն ռիսկերի մեծացման վրանգ տեսնելու հանգամանքով: Հարստությունը հարկելու խնդրի վրա ՀԱԿ-ը ծրագրում չի կենտրոնացել: Առհասարակ թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներին ողջ ծրագրում երրորդական նշանակություն է տրված: Թերևս դրանով է բացատրվում օրենսդրական փոփոխության քվեարկության ժամանակ խմբակցությունում երկակի մոտեցման ցուցաբերումը. պարզամավորների մի մասը դեմ է քվեարկել, մյուս մասը չի մասնակցել քվեարկությանը:

ՀՅԴ-ն և «Ժառանգությունը» ՓՄՁ-ների զարգացման խնդիրն առաջարկում են լուծել առավելապես դրամավարկային ձևում քաղաքականության իրականացման միջոցով: Հեղափոխական առաջարկում են տնտեսավարողների միջև տարբերակումը դնել ոչ թե ելնելով բիզնեսի ծավալից կամ կարեգործիաներից, այլ իրավական, հարկային դաշտում թափանցիկ գործելու և բարեխղճության աստիճանից, որպես թիրախ ընտրել օլիգոպոլ կամ մոնոպոլ բնույթ ունեցող, սրվերում գործող ձեռնարկատիրությունը՝ առավելապես սեփականության կենտրոնացման կանխարգելման նպատակով: Խոշոր տնտեսավարող սուբյեկտներում պարտադիր աուդիտի վերապումը դիտարկվում է որպես պետության կողմից այս ոլորտի վերահսկողության մեխանիզմները թուլացնող գործոն: Թե ՀՅԴ-ն, թե «Ժառանգությունը» սուբիալական արդարության և պատասխանատվության սկզբունքների գործնական կիրառման տեսանկյունից առանցքային են համարում շքեղության հարկումը՝ սկզբունքային այն տարբերությամբ, որ դա կատարվի ոչ թե ակցիզային հարկի, այլ գույքահարկի օրենսդրությունը փոփոխության ենթարկելու և պրոգրեսիվ հարկման ռեժիմ սահմանելու միջոցով: Այս իմաստով նրանց ծրագրային փիլիսոփայությանը նույնչափ հակասում են թե մինչև օրենսդրական այս փոփոխությունը գործող մեխանիզմը, թե «շքեղության» հարկից հրաժարվելու քաղաքական մեծամասնության դիրքորոշումը: Այդ է, թերևս, պարզառը, որ մասնավորապես ՀՅԴ-ն տարբերակված ոչ միասնական դիրքորոշմամբ է հանդես եկել քվեարկության ժամանակ:

ՕԵԿ ծրագրի մոտեցումներն այս խնդիրներին չափազանց ընդհանրական են: Շեշտվում է սրվերայնության, օլիգոպոլ համակարգի դեմ պայքարի ուժեղացման խնդիրը, բայց հասկանալի չեն դրա կենսագործման մեխանիզմները: ՕԵԿ-ը ևս կողմնակից է տնտեսավարողներին պետության առջև պարտավորությունների կատարման բարեխղճության չափորոշիչով տարբերակելու մոտեցմանը՝ առաջարկելով անբարեխիղճների նկատմամբ կիրառել հարկային խստացված



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

վարչարարության, իսկ բարեխիղճ կազմակերպությունների համար սահմանել վերահսկողության առավել պարզեցված ընթացակարգեր: Եթե մեխանիզմներից զուրկ այս նպատակադրումները համադրենք կառավարության այն հիմնավորման հետ, թե խոշոր տնտեսավարողների համար առանց աուդիտի հաշվապահական հաշվառման նոր ընթացակարգի սահմանումը բխում է բարեխիղճ հարկատուներին ֆինանսական բեռից և վարչարարական հսկողությունից ազատելու անհրաժեշտությունից, ապա այդ լուծումները պետք է համահունչ համարել ՕԵԿ-ի ծրագրային մոտեցումներին: Այս տեսանկյունից խմբակցության կողմ քվեարկությունը փաթեթին տրամաբանական է: «Շքեղության հարկից» հրաժարվելու օրենսդրական նախաձեռնությանը ՕԵԿ-ի վերաբերմունքը դրսևորվեց քվեարկությանը չմասնակցելով, ինչը նշանակում է, որ սկզբունքորեն դեմ չլինելով՝ խմբակցությունն առաջնորդվեց պատասխանատվությունից խուսափելու տրամաբանությամբ: ՕԵԿ նախընտրական ծրագրում հիմնահարցն անտեսված է:

ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն գերակա են համարում տնտեսական չարաշահումների կանխարգելումն ու հակամրցակցային գործողության պարզումը՝ առանց որոշակիացնելու դրանց եղանակները: ԲՀԿ-ն նախատեսում է ստվերային տնտեսության դեմ կոշտ, բայց հիմնավորված պայքար՝ առանց բացատրելու, թե ինչ է հասկանում «հիմնավորված» եզրույթի տակ: Դատելով «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններին կողմ քվեարկելու իրողությունից՝ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն անկախ աուդիտի մեխանիզմի կիրառումը չեն համարում այդ երևույթների դեմ պայքարի արդարացված միջոց: Նրանք անտեսել են այդ փոփոխության արդյունքում ՓՄՁ-ների նկատմամբ խոշոր բիզնեսի առավելությունն ստանալու հանգամանքը, ինչպես նաև այն իրողությունը, որ աուդիտ անցկացնելու խոշոր տնտեսավարողներին ազատելը ոչ միայն հակամրցակցային գործունեության և չարաշահումների, այլև ստվերային գործունեությանը նպաստելու պոտենցիալ է պարունակում: Այն հակասում է նաև ՓՄՁ-ների նկատմամբ վերահսկողության և պետական միջամտության ավելի մեղմ ռեժիմներ սահմանելու մասին ԲՀԿ-ի ծրագրային դիրքորոշմանը:

Դատելով ծրագրերից՝ խորհրդարանական ամենամեծ խմբակցությունները շքեղության հարկ ներդնելու կամ այս դաշտը կարգավորելու անհրաժեշտություն չեն տեսնում: «Ակտիվային հարկի» մասին օրենքում փոփոխություն կատարելու նախաձեռնությանը ՀՀԿ-ն կողմ է քվեարկել, ԲՀԿ-ն դեմ: Հարկանշական է, որ ԲՀԿ-ի բացասական վերաբերմունքն արտահայտվել է չնայած այն փաստին, որ նախագծի հեղինակներից մեկը այդ խմբակցության անդամ է: Դեմ քվեարկելով ԲՀԿ-ն պարզապես գործել է ընդդիմության հետ համաձայնությունների տրամաբանությամբ:

Միաժամանակ պետք է նկատել, որ օրենսդրական վերոնշյալ նախաձեռնությունների նկատմամբ ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի մոտեցումների վրա մեծապես ազդել է այդ խմբակցություններում գործարարության հետ առնչություն ունեցող մեծ թվով պարզամավորների և նրանց բիզնես շահերի առկայությունը:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հեռուսագովազդային տեսադաշտում

քաղաքականությունը՝

խորհրդարանի

Դիտարկվող նստաշրջանի ընթացքում ԶԼՄ-ների գործունեությունը խորհրդարանի ուշադրության առարկա է դարձել օրենսդրական երկու փաթեթների համապետքստում, որոնք ուղղված էին հեռուստագովազդի շուկայում խաղի կանոնների փոփոխությանը: Երկու դեպքում էլ փոփոխությունները վերաբերել են նույն՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» և «Գովազդի մասին» օրենքներին: Ոլորտին վերաբերող ևս մեկ օրենսդրական նախաձեռնություն, որը փոփոխություններ էր նախատեսում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, շրջանառության մեջ դրվելուց անմիջապես հետո արժանապավ մեղիա ոլորտի բուռն հակազդեցությանը: «Ընդդեմ ֆեյքերի» պայմանական անվանումը ստացած օրինագծի շուրջ կազմակերպված խորհրդարանական լսումներից հետո հեղինակները որոշեցին ժամանակավորապես կասեցնել դրա հետագա քննարկումները:

Ալկոհոլի հեռուստագովազդ

«Գովազդի մասին» եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքներում կատարված փոփոխությունների (21.06.2014թ.) նպատակը թունդ ալկոհոլային խմիչքների գովազդի արգելքի կանոնակարգումներում փոփոխություններ կատարելն էր եւ որոշակի ժամանակահատվածում երեկոյան ժամը 10-ից մինչեւ առավոտյան ժամը 6-ը, նման գովազդի թույլատրումը: Մինչ այս փոփոխությունները, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը արգելում էր զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) խմիչքների (բացառությամբ կոնյակի) եւ ծխախոտի գովազդը:

Ըստ հեղինակների՝ նշված ժամերին բնակչության անչափահաս հատվածը չի դիտում հեռուստատեսություն, հետևաբար, գործող օրենքի տրամաբանական սահմանափակումները մնում են ուժի մեջ: Մյուս կողմից՝ ըստ նախնական հաշվարկների՝ օրինագծի ընդունման դեպքում ալկոհոլային խմիչքներ ներմուծող ընկերություններից կարող են տարեկան մինչեւ լրացուցիչ 1 մլրդ դրամի գովազդային միջոցներ ուղղվել հայաստանյան հեռուստաընկերություններ:

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

Հայաստանում թունդ ալկոհոլային խմիչքների գովազդի թույլատրումը գիշերային ժամերին միանշանակ չի ընդունվել ինչպես առողջապահության, այնպես էլ ԶԼՄ ոլորտի ներկայացուցիչների եւ փորձագետների կողմից: Ոմանք հակված են կարծելու, որ սա որոշ հեռուստաընկերությունների եւ թունդ ալկոհոլային խմիչքների արտադրությամբ կամ ներմուծմամբ զբաղվող ընկերությունների համարել լոբինգի արդյունք է, և

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

գովազդային մուտքերի ավելացումը, ինչը վկայակոչում են օրինագծի հեղինակները հիմնավորման մեջ, էական ազդեցություն չի թողնելու հեռուստահաղորդումների բովանդակության որակի վրա: Փորձագետների մի այլ խմբի կարծիքով՝ փոփոխությունը էականորեն չի ավելացնի թունդ ալկոհոլային խմիչքների սպառումը Հայաստանում (հեպտեաբար եւ չնչին ազդեցություն կունենա բնակչության առողջության վրա), այն մեծապես կազդի միայն այս կամ այն ապրանքանիշի խմիչքների (առավել շաքարովազդվողների) սպառման վրա:

Երկրորդ, մրավախություն կա, որ օրենքի նպատակը միայն մի քանի, շուկայում առաջատար համարվող և, ինչպես ընդունված է կարծել, իշխանությունների հեղսերտ առնչություն ունեցող հեռուստաընկերությունների գովազդային եկամուտներն ավելացնելն է:

Հանրային հեռուստապետությամբ գովազդի արգելում. «Հեռուստապետության եւ ռադիոյի մասին» և «Գովազդի մասին» օրենքներում առաջարկվող փոփոխությունների (12.03.2014թ., առաջին ընթերցում) նպատակը Հանրային հեռուստապետությամբ գովազդի (բացառությամբ սոցիալական գովազդի, ինչպես նաեւ մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին տեղեկությունների) արգելումն է: Ակնկալվում է, որ գովազդի տնտեսության կրճատմամբ եթերաժամանակը կտրամադրվի «ավելի բարձր արժեք եւ կարելություն ունեցող հեռուստահաղորդումների ցուցադրմանը»: Օրինագծի հիմնավորման մեջ նշվում է, որ առեւտրային գովազդը չի ծառայում այն նպատակներին, որոնց համար ստեղծվել, պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվում և գործում է հանրային հեռուստապետությունը:

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

Նախկինում սահմանված էր, որ Հանրային հեռուստապետությամբ հեռարձակվող գովազդի ծավալը չէր կարող գերազանցել ընդհանուր հաղորդումների 5 տոկոսը: Սակայն Հանրայինը հաճախ էր խախտում այդ սահմանը: 2010թ. հունիսի 10-ին կարարված փոփոխություններով այդ շեմը բարձրացվեց 7 տոկոսի, եւ վերջին հեղազոտությունները ցույց էին տալիս, որ հանրայինը կարողանում է պահպանել այն: Այսուհանդերձ, շաքար փորձագետներ եւ ոլորտի մասնագետներ պնդում էին, որ հանրայինում պետք է բացառել գովազդը: Եվ հիմա, ողջունելով հանդերձ նման օրինագիծը, պետք է նաեւ նշել, որ եթե գովազդային մուտքերից կորուստների չափով չավելացվի հանրային հեռուստապետության բյուջեի համար ֆինանսավորումը կամ եթե չգտնվեն ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ, ապա լավ նպատակին (սպառողը կունենա ընդհանուր ուղղվածության մի հեռուստաալիք, որի հաղորդումները կդիրի առանց գովազդային միջարկությունների) միտված նախաձեռնությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ հանրայինի հաղորդումների որակի վրա:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Խնդիրը Աժ Խմբակցությունների ծրագրերում

Տեղեկանք: «Գովազդի մասին» եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքներում ալկոհոլի գովազդը թույլատրող փոփոխություններ առաջարկող օրենսդրական փաթեթն ընդունվեց հունիսի 21-ի արտահերթ նստաշրջանում 67 կողմ ձայնով: ՀՀ-ական պարզամավորների ներկայացրած օրինագծի քվեարկությանը մասնակցեց միայն Հանրապետական խմբակցությունը:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» և «Գովազդի մասին» օրենքներում առևտրային գովազդն արգելող փոփոխությունները առաջին ընթերցմամբ ընդունվեցին ձայների 85 կողմ, 5 դեմ, 18 ձեռնպահ հարաբերակցությամբ: Փաթեթն ընդգրկվել էր հունիսյան քառօրյա օրակարգ, սակայն երկրորդ ընթերցմամբ չներկայացվեց, թեև նախատեսվում էր, որ փոփոխություններն ուժի մեջ են մտնելու 2014 թ. սեպտեմբերի 1-ից:

Խորհրդարանական ուժերն ավելի մեծ հեղափոխություն հանդես բերեցին հատկապես պարզամավորների հեղինակած թունդ ալկոհոլային խմիչքների հեռուստագովազդի թույլատրումը նախատեսող փաթեթի նկատմամբ՝ լոյալություն դրսևորելով Հանրային հեռուստաընկերության եթերում առևտրային գովազդն արգելելու վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների փաթեթի նկատմամբ: Խմբակցությունների տեսակետները, սակայն, ոչ թե հայեցակարգային հիմք ունեին, այլ իրավիճակային, ինչը պայմանավորված է ոլորտի կարգավորման ծրագրային մոտեցումների բացակայությամբ: Բացառությամբ «Ժառանգություն» և մասամբ ՀՅԴ խմբակցությունների՝ մյուս բոլոր ուժերի նախընտրական ծրագրերում խոսքի և մասնավորապես մամուլի ազատության ոլորտը, դրա հետ կապված առկա իրավիճակն ու տեսլականը գործնականում բացակայում են ամբողջությամբ՝ թե մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության, թե լրատվադաշտի՝ որպես չորրորդ իշխանության ոլորտի կարգավորման տեսանկյուններից:

ՕԵԿ-ը քաղաքական համակարգի, պետական իշխանության թեևերի հարաբերակցության համատեքստում ընդամենը հռչակագրային ձևով ամրագրում է անկախ, ազատ մամուլի ձևավորման և կայացման սկզբունքը՝ առանց ներկայացնելու դրա կենսագործման իր բանաձևը և մատնանշելու հիմնական առաջնահերթությունները և խնդիրները: Փաթեթների առաջին քվեարկության ժամանակ ՕԵԿ-ը դեռևս կոալիցիայի մաս էր կազմում և առաջնորդվել է բացառապես իր այդ կարգավիճակից բխող հանձնառություններով:

ՀՅԴ-ն խոսքի ազատության և բազմակարծության ապահովման խնդիրն է կարևորել՝ դրա հիմնական մեխանիզմ դիտարկելով հատկապես հեռուստատեսային ոլորտի կառավարման լիազորություններով օժտված պետական մարմինների՝ ՀՈԱՀ-ի և ՀՀՌԽ-ի ձևավորման հիմքում քաղաքական հավասարակշռության ապահովման սկզբունքի կիրառումը:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դրանով կարևորել է հեռուստատեսության տեղեկատվաքարոզչական գործառույթի քաղաքական նշանակությունը: Երկու փաթեթների նկատմամբ ՀՅԴ խմբակցության փարբեր դիրքորոշումները (պարագամավորների հեղինակած փաթեթին դեմ, իսկ կառավարության հեղինակած փոփոխություններին կողմ հանդես գալը) կարելի է պայմանավորել ավելի շար սոցիալական պարասխանավորության սկզբունքի նկատմամբ ցուցաբերվող ավանդական հերևողականությամբ:

ՀՀԿ, ԲՀԿ և ՀԱԿ ծրագրերում որևէ անդրադարձ չկա ԶԼՄ-ներին: ՀՀԿ-ի և ԲՀԿ-ի պարագայում դա կարելի է բացատրել ծրագրերի չափից դուրս ընդհանրականությամբ, առանձին ոլորտների նկատմամբ հեղաքրքրության բացակայությամբ: ՀԱԿ-ի դեպքում հեղաքրքիր է այնքանով, որ որպես ակտիվ ընդդիմադիր ուժ իր գործունեության ընթացքում բազմիցս է ՀԸ-ներին մեղադրել խտրականություն դրսևորելու մեջ, սակայն ծրագրում ընդհանրապես չի անդրադարձել ոլորտի կարգավորմանը:

Արդյունքում ՀԱԿ -ն ու ԲՀԿ-ն երկու խմբակցությունները ներկայացված փաթեթներին մոտեցել են գրեթե նույնական դիրքորոշումներով: Ալկոհոլային խմիչքների գովազդն արտոնող օրենսդրական փաթեթի քվեարկությանը չեն մասնակցել՝ այն փապալելու մարտավարական նկատառումներով, իսկ Հանրային հեռուստաընկերության եթերում գովազդն արգելող օրենսդրական փաթեթին հիմնականում ձեռնպահ են քվեարկել: Երկուսի պարագայում էլ գործել են քաղաքական շարժառիթները՝ պայմանավորված առանձին հեռուստաընկերությունների, մեդիա հոլդինգների օգտին թաքնված լոբբինգ տեսնելու մրավախությամբ և դրա ազդեցությունը չեզոքացնելու հրամայականով:

Ոչ իշխանական ուժերի բոյկոտի պարագայում ալկոհոլային խմիչքների հեռուստագովազդի թույլատրման օրենսդրական նախաձեռնությունը հաջողվեց անցկացնել ՀՀԿ խմբակցության միասնական քվեարկության շնորհիվ: Բայց այդ դիրքորոշումը ոչ թե ծրագրային էր, այլ իրավիճակային՝ պայմանավորված նախաձեռնության հեղինակ ՀՀԿ-ականներին աջակցելու թիմային հայեցողությամբ: Ի դեպ, կառավարությունը ժամանակին ևս այդ փաթեթի առջև կանաչ լույս էր վառել հենց նույն մոտեցմամբ առաջնորդվելով, այսինքն, միայն այն բանի համար, որ նախաձեռնության հեղինակները ներկայացնում են նույն քաղաքական թիմը: Եվ դա այն դեպքում, երբ ՀՀ առողջապահության նախարարությունը փաթեթի վերաբերյալ բացասական կարծիք էր հայտնել:

«Ժառանգությունը» խորհրդարանական միակ ուժն է, որն իր նախընտրական ծրագրում ուշադրություն է դարձրել հեռուստատեսությունում գովազդային քաղաքականությանը՝ հանդես գալով Հանրային ՀԸ-ի եթերից առևտրային գովազդը հանելու գաղափարով: Այն դիփարկվում է եթերային քաղաքականությունը հասարակության տեղեկատվական պահանջումների հիման վրա կառուցելու և Հանրային ՀԸ-ի ֆինանսական ինքնաբավությունն ապահովելու սկզբունքների ներդաշնակեցման հայեցակետից: Այս խնդիրը մարուցվում է հեռուստաառադիոլորտի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համալիր լուծումների համարեքստում:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սա խոսում է «Ժառանգության» կողմից ՋԼՄ համակարգում էլեկտրոնային լրատվամիջոցներին առանձնահատուկ դեր վերապահելու մասին՝ թերևս հաշվի առնելով հանրային կարծիքի ձևավորման և ուղղորդման ամենամեծ պոպուլյարիզացիայի ունենալու իրողությունը: Բայց, չնայած Հանրային ՀԸ-ն կոմերցիոն գովազդի դաշտից դուրս բերելու այս ծրագրային մոտեցմանը, համապատասխան փաթեթի քվեարկությանը ներկա «Ժառանգության» 2 պարզամավորները դեմ են արտահայտվել՝ առանց հիմնավորելու իրենց որոշումը: Այս իմաստով ծրագրի և խմբակցության վարքագծի հակասականությունն անառարկելի է: Աժ պարզամավորների հեղինակած փաթեթի հանդեպ «Ժառանգության» գնահատականը բխել է ոչ իշխանական քառյակի՝ նախաձեռնությունը փապալելու համաձայնեցված մարտավարությունից:

Իրավական ոլորտ

Գլխավոր դատախազի հաղորդման ներկայացումը Աժ-ում

ՀՀ Գլխավոր դատախազի՝ խորհրդարանին ամենամյա հաղորդում ներկայացնելու ընթացակարգը սահմանող օրենսդրական նախաձեռնությունն այն եզակի դեպքերից էր, երբ պառլամենտը սկզբունքայնություն և հերևողականություն ցուցաբերեց իր վերահսկողական գործառույթին իրական բովանդակություն հաղորդելու ուղղությամբ: Սա նաև նստաշրջանի ընթացքում ընդունված միակ օրենսդրական փաթեթն է, որի տակ ստորագրել են խորհրդարանական բոլոր 6 խմբակցությունները:

Տեղեկանք: «Ազգային ժողովի կանոնակարգ» և «Դատախազության մասին» օրենքներում կատարված փոփոխություններով (11.03.2014թ., 108 կողմ, 1 ձեռնպահ) սահմանվում է գլխավոր դատախազի՝ խորհրդարանին ամենամյա հաղորդում ներկայացնելու նոր կարգ: Մինչ այս փոփոխությունը՝ «Դատախազության մասին» օրենքը սահմանում էր հաղորդման ներկայացում երկրի նախագահին և Ազգային ժողովին՝ առանց մանրամասնելու ներկայացման ընթացակարգը: Փոփոխությամբ սահմանվում է, որ գլխավոր դատախազը ՀՀ դատախազության նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը ՀՀ նախագահին և Աժ է ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը, իսկ Աժ նախագահը երկօրյա ժամկետում այն ուղարկում է մշտական հանձնաժողովներ և մեկամսյա ժամկետում ընդգրկում Աժ չորսօրյա նիստերի օրակարգ: Հաղորդման քննարկումն ընթանում է «Աժ կանոնակարգ» օրենքով սահմանված կարգով՝ տարբերությամբ, որ գլխավոր դատախազի 1 ժամանուց ելույթին հարակից զեկուլցումներ չեն հաջորդի: Դատախազին կտրվեն հարցեր, կհաջորդի մտքերի փոխանակությունը, քննարկումը կավարտվի գլխավոր դատախազի եզրափակիչ ելույթով՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ի դեպ, քննարկման ընթացակարգին վերաբերող հարցերը գլխադասային՝ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովում բախումների պարձառ դարձան պարզամավորների ու կառավարության ներկայացուցչի միջև: Պետաիրավական հանձնաժողովի նախագահը կարծում էր, որ դադարադադիր հաղորդման քննարկման ժամանակ հարակից զեկուլյամբ պետք է հանդես գա պետաիրավական հարցերի հանձնաժողովը, փոխնախարարը դեմ էր որևէ հարակից զեկուլյի, իսկ կառավարությունը դեմ էր նախագծով առաջարկվող փոփոխություններին ընդհանրապես: Լիազուժար նիստի ընթացքում, սակայն, փարաձայնություններ չեղան. արդարադարության նախարարը փոխնախարարի պահվածքի համար ներողություն խնդրեց, իսկ նախագիծը, ըստ էության, ընդունվեց կառավարության համար ընդունելի փարբերակով. գլխավոր դադարադադիր հաղորդումը ԱԺ-ում կքննարկվի առանց հարակից զեկուլյների, դրան վերաբերող որևէ փաստաթուղթ ԱԺ-ն չի ընդունի:

Գլխավոր դադարադադիր հաղորդումը՝ կառավարության սցենարով

(փորձագիտական վերլուծություն)

Նախաձեռնության հիմնական նպատակը գլխավոր դադարադադիր հաղորդման ներկայացման և քննարկման ժամկետների հստակեցումն էր, ինչն ընդհանրապես կարգավորված չէր նախկինում: Սահմանվում է, որ գլխավոր դադարադադիր հաղորդումը պետք է ԱԺ ներկայացվի մինչև ընթացիկ փարվա ապրիլի 1-ը, իսկ դրա քննարկումը պետք է տեղի ունենա առաջին կիսամյակի ընթացքում: Թեև կարելի է նախատեսված ժամանակահատվածը նկատելիորեն երկար համարել, բայց այս դեպքում խնդիրն ավելի շար ժամկետների որոշակիացման, քան դադարադադրությանը հատկացվող նախապարաստական շրջանի օպտիմալության որոշման հարթությունում է: Իշխանության այլ օղակների կողմից օրենքով սահմանված հաշվեկալությունները, հաղորդումները, ծրագրերը ներկայացնելու ժամկետների պահպանման իրավական ընթացակարգերի համարարած, հաձախ անտրամաբանական խախտումների ֆոնին դադարադադիր հաղորդման ժամկետների կոնկրետացումը կարևոր քայլ է, որ կարող է նախադեպային դառնալ նաև ԱԺ-ում ներկայացվող մյուս հաղորդումների ու հաշվեկալությունների համար:

Երկրորդ կարևոր արդյունքը գլխավոր դադարադադիր կողմից հաղորդման ներկայացման և դրա խորհրդարանական քննարկումների ռեժիմի սահմանումն էր: Չնայած քննարկումների համար նախատեսված ընթացակարգը որոշակի սահմանափակումներ ունի, մասնավորապես, այն չի ուղեկցվելու հարակից զեկուլյներով, միևնույն է, հարց ու պարաստանի, ինչպես նաև մտքերի փոխանակման միջոցով այն թույլ կտա մանրամասնորեն քննարկել ու հրապարակայնացնել դադարադադրության մեկամյա գործունեությունը: Սակայն գլխավոր դադարադադիր հաղորդման վերաբերյալ խորհրդարանը որևէ փաստաթուղթ կամ որոշում չի ընդունելու: Սա, մեծ հաշվով, շարունակում է ձևականության սահմաններում պահել դադարադադրության և դադարադադիր գործունեության նկատմամբ խորհրդարանի վերահսկողության լծակները: Հաղորդումը քվեարկության չղնելը խորհրդարանին զրկում է քաղաքական դիրքորոշում հայտնելու և դրանով դադարադադիր գործունեությունը գնահատելու իրավունքից:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մինչդեռ, քանի որ՝, ըստ Սահմանադրության 103-րդ հոդվածի, ԱԺ-ն օժտված է գլխավոր դատախազին հանրապետության նախագահի առաջարկությամբ նշանակելու և նրա առաջարկությամբ էլ պաշտոնանկ անելու իրավասությամբ, փրամաբանական կլիներ, եթե ԱԺ-ն նաև կարողանար քվեարկության և որոշում ընդունելու միջոցով դիրքորոշում հայտնել իր նշանակած առանցքային պաշտոնատար անձի գործունեության արդյունավետության վերաբերյալ: Այս սկզբունքը կիրառելի է նաև նշանակման և պաշտոնանկման նույն մեխանիզմներով անցնող պետական այլ համակարգերի՝ մասնավորապես Վերահսկիչ պալատի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ղեկավարների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումների դեպքում: Հակառակ պարագայում ԱԺ-ի վերահսկողական գործառույթը շարունակում է մնալ քաղաքական և կոնյունկտուրային որոշումներն ի կատար ածելու պարզունակ պարտավորության շրջանակում:

Ընդունված օրինագիծն ամբողջությամբ չի արտացոլում պատգամավորների հեղինակած նախագծի հիմնական հայեցակետերը: Այս տեսակետից առանձնակի ուշագրավ է կառավարության դրսևորած պահպանողականությունը և նկատելի անգիջում կեցվածքը մի հարցում, որը վերաբերում է ոչ թե անմիջապես գործադիր իշխանության գործառույթներին, այլ դատական իշխանության մեկ օղակի: Այս հանգամանքը խորհրդարանը որևէ գնահատականի չարժանացրեց, թեև այն ուղղակիորեն առնչվում էր ԱԺ-ում դատախազության հաշվետվողականության մեխանիզմի արդյունավետության խնդրին:

Քվեարկության արդյունքները ցույց տվեցին, որ խորհրդարանական բոլոր բևեռներն ամբողջական կազմով համաձայնել են այն փարբերակին, որը նպատակահարմար է գտել կառավարությունը: Սա հերթական անգամ արտացոլեց գործադիրի կամքով առաջնորդվելու խորհրդարանական մեծամասնության ստրեթեգիային կեցվածքը, թեև ԱԺ-ում կոնկրետ այս հարցի շուրջ ձևավորված եզակի միասնական դիրքորոշումը համապատասխան քաղաքական կամք դրսևորելու լիարժեք հնարավորություն էր ստեղծում: Մնում է ենթադրել, որ խորհրդարանական ուժերը գերադասել են ունենալ դատախազի հաշվետվողականության թեկուզ թույլ մեխանիզմ, քան չունենալ որևէ մեխանիզմ ընդհանրապես:

Քննչական կոմիտե

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքը՝ հարակից մոտ երկու փասնյակ օրենքներում փոփոխությունների փաթեթով, ընդունվեց Հայաստանում նոր կառույց՝ միասնական քննչական մարմին ստեղծելու, ինչպես նաև պետական ծառայության նոր տեսակ՝ Քննչական կոմիտեում ծառայություն սահմանելու նպատակով: Ի սկզբանե նախատեսվում էր, որ նոր կառույցը կմիավորի փարբեր համակարգերում գործող հինգ քննչական մարմինները, սակայն օրենքի ներկայացմամբ պարզ դարձավ, որ կոմիտեն ստեղծվում է միայն Պաշտպանության նախարարության և Ոստիկանության կառուցվածքներում գործող քննչական մարմինների հիմքի վրա:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկանք. «Քննչական կոմիտեի մասին» օրենքի և հարակից օրենսդրական փաթեթի ընդունմամբ (19.05.2014թ.) ստեղծվում է ոչ միայն նոր քննչական մարմին, այլ նաև պետական ծառայության նոր տեսակ՝ Քննչական կոմիտեում ծառայություն: Այն կարգավորում է Քննչական կոմիտեում ծառայության անցնելու կարգը, դասակարգում է պաշտոններն ու կոչումները, սահմանում ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, իրավական ու սոցիալական երաշխիքները և այլն:

Գործադիրը նոր կառույցի ստեղծումը հիմնավորում է քննչական մարմինների անկախությունն ամրապնդելու, քրեական գործերով նախաքննության արդյունավետությունը բարձրացնելու, նախաքննության մարմինների դատավարական ինքնուրույնությունը մեծացնելու և աշխատանքի կազմակերպման սկզբունքները, գործառնությունները միասնականացնելու անհրաժեշտությամբ:

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

Կառավարությունը Քննչական կոմիտեի ստեղծումը պայմանավորում է քննչական մարմինների աշխատանքի կազմակերպման սկզբունքներն ու գործառնությունները միասնականացնելու անհրաժեշտությամբ, բայց կոմիտեի կարգավորման դաշտից դուրս է թողնում գործող հինգ քննչական մարմիններից երեքը՝ Հաբուկ քննչական ծառայության, ՊԵԿ և ԱԱԾ քննչական մարմինները: Այսպիսի կորսվածության պահպանումը չի կարող աշխատառձի, գործունեության սկզբունքների միասնականացման, քննչական գործունեության անկախության բավարար պայման հանդիսանալ: Բացի դրանից, օրենքը կոչված է Քննչական կոմիտեի՝ իբրև առանձին կառույցի ստեղծմանը, սակայն, ըստ էության, գրեթե ամբողջությամբ վերաբերում է կոմիտեում պետական հատուկ ծառայությանը՝ ներառելով կադրային համալրումների, արեստավորման ու վերապատրաստման, առաջխաղացման, ծառայողների խրախուսման և տույժերի կիրառման կարգավորումները: Դրա հետևանքով առկա է խզում օրենքի նպատակային նշանակության և բովանդակության միջև: Վերջնականապես հստակեցված չէ, թե ինչ կարգավիճակ է ունենալու Քննչական կոմիտեն ընդհանուր պետական կառավարման և հանրային ծառայության համակարգում:

Քննչական միասնական մարմնի ստեղծման գաղափարն ի հայտ եկավ ՀՀ գիտավոր դատախազի պաշտոնից Աղվան Հովսեփյանի հեռանալուց անմիջապես հետո և մամուլում դիտարկվում էր որպես նախկին գլխավոր դատախազին դատաիրավական համակարգում նոր պատասխանատու պաշտոնով ապահովելու միջոց: Այդ համոզմունքն ամրապնդվեց, երբ 2013թ սեպտեմբերին ՀՀ նախագահը Աղվան Հովսեփյանին նշանակեց միասնական քննչական մարմնի ձևավորման իրավական ապահովման հանձնաժողովի նախագահ: Այս իրողությունները լրջորեն անդրադարձան օրենսդրական փաթեթի քննարկումների վրա՝ խորհրդարանական ուժերի վերաբերմունքը պայմանավորելով ձևավորված կանխակալ հասարակական կարծիքով: Մինչդեռ, եթե նրանց կողմից համակարգային վերաբերմունք ցուցաբերվեր, ապա առաջնորդողը պետք է լիներ օրենքի հնարավորինս հղկումը, նոր համակարգի ստեղծումը հանրային միասնական ծառայության հիմնական սկզբունքներին հնարավորինս համապատասխանեցնելու մղումը:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Խնդիրը նախընտրական ծրագրերում

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքը՝ հարակից մոտ երկու տասնյակ օրենսդրական փոփոխությունների փաթեթով, ընդունվեց ձայների 88 կողմ, 32 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ: Կառավարության հեղինակած փաթեթին կողմ քվեարկեցին ՀՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ և «Ժառանգություն» խմբակցությունները, դեմ ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը քվեարկեց ազատ (հիմնականում կողմ):

Քննչական կոմիտեի ստեղծման օրենսդրական փաթեթն առաջին ընթերցմամբ ընդունվել է, երբ կոալիցիոն գործընկերոջ՝ ՕԵԿ-ի օգնությամբ ՀՀԿ-ական մեծամասնությունը դեռ կարողանում էր նիստերին ապահովել որակյալ մեծամասնություն: Այդ փուլում ոչ իշխանական քառյակը ներկայացնող ուժերն առանց բացառության քվեարկել են ձեռնպահ: Մինչդեռ փաթեթի երկրորդ և երրորդ ընթերցման ժամանակ, երբ ՕԵԿ-ն այլևս կոալիցիայի մաս չէր, իսկ ՀՀԿ-ն դժվարություններ էր ունենում ցանկալի օրինագծերն անցկայանելիս, բացառությամբ ԲՀԿ-ի (որը դեմ է քվեարկել), մյուս բոլոր ոչ իշխանական ուժերը քվեարկել են կողմ: Ընդ որում թե վերջիններս, թե ԲՀԿ-ն ԱԺ ամբիոնից որևէ բացառություն չեն փվել առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում դիրքորոշման նման փոփոխության պատճառների մասին:

ԲՀԿ. Արդարադատության համակարգն իբրև մարդու իրավունքների պաշտպանության առանցքային ոլորտ ամբողջությամբ անտեսվել է կուսակցության սուբիալակն ուղղվածություն ունեցող նախընտրական ծրագրում: Այնպիսի փափկորություն է, որ դատական իշխանությունը որպես այդպիսին առհասարակ գոյություն չունի կուսակցության համար, կամ այդ ոլորտում ԲՀԿ-ն չի տեսնում որևէ խնդիր՝ համակարգային կամ իրավիճակային: Ծրագիրը ժլատ է նաև պետական ծառայությանը և դրա ընդլայնմանն առնչվող հարցերում: Այս առումով բնական պետք է համարել քննչական գործունեությունն առանձին մարմնի համակարգման ներքո կենտրոնացնելու, ինչպես նաև քննչական կոմիտեում ծառայության ստեղծման անհրաժեշտության մասին անգամ հեռավոր ակնարկի բացակայությունը ԲՀԿ ծրագրում:

ՀՅԴ. Նախընտրական ծրագրում արդարադատության ոլորտի հետ կապված հիմնական շեշտադրումները հռչակագրային մակարդակով կատարված են դատարանների անկախության երաշխավորման, մասամբ նաև դատախազական համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման անհրաժեշտության վրա: Դժվար է ընդհանրական ձևակերպումներից հասկանալ՝ որքանով է կուսակցությունը նման ռիսկերի տեսնում քրեադատավարության ոլորտում, մասնավորապես նախաքննության փուլում, և որքանով է քննչական միասնական, դատախազությունից հնարավորինս անկախ մարմնի ձևավորումը դիտարկում որպես հակակոռուպցիոն մեխանիզմ:

ՕԵԿ. Ինչպես մյուս ոլորտների, այնպես էլ դատաիրավական և քրեադատավարական համակարգի հարցում ՕԵԿ-ը չի դավաճանում հայեցակարգային լուծումների



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

միջոցով բարեփոխումներ իրականացնելու կուրսին և հանդես է գալիս դադարակալ իշխանության համակարգը արմատական բարեփոխումների ենթարկելու դիրքերից: Դրան ուղղված առաջարկները վերաբերում են որոշակի հանցագործությունների ապաքրեականացմանը, դադարակալ իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը: Այսինքն՝ քրեական գործերով մինչդարական փուլում առկա իրողություններն ու խնդիրները կուսակցությունն առնվազն առաջնային չի համարում: Այս իմաստով քննչական գործունեությունը պետական ծառայության վերածելու, առավել ևս՝ այն համակարգելու նպատակով առանձին կառույց ստեղծելու կառավարության նախաձեռնության նկատմամբ ՕԵԿ-ի դիրքորոշումը (որը, ի փարբերություն ԱԺ մյուս խմբակցությունների, փոփոխության չի ենթարկվել փաթեթի առաջին և երկրորդ ընթերցումների ժամանակ) չունի ծրագրահեն բնույթ, այլ պայմանավորված է բացառապես կոալիցիայի շրջանակներում ստանձնած պարտավորություններով:

ՀՀԿ. Ելակետային է համարվում մարդու իրավունքների համակողմանի պաշտպանության, արդարադատության մատչելիության և հաշվետվողականության ապահովման նպատակով համակարգը կատարելագործելու հարցը: Բայց դրա հիմքում ոչ այնքան համակարգային, կառուցվածքային արմատական փոփոխություններն են, որքան կադրային քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացումը: Սա քննչական նոր մարմնի ձևավորման և նոր ծառայության ստեղծման հետ առնչվում է այնքանով, որքանով նոր օրենքով անձնակազմի կառավարման սկզբունքներն ու մեխանիզմները նման են հանրային ծառայությունում գործողներին: Ամեն դեպքում, նոր մարմնի ձևավորման որոշումը ՀՀԿ-ի համար ոչ թե ծրագրային է, այլ իրավիճակային: Դրա մասին է վկայում նախաքննության արդյունավետության բարձրացման ու քննչական միասնական մարմնի ստեղծման մասին կոնկրետ դրույթների բացակայությունը թեմախընդրական ծրագրում, թե ՀՀԿ աջակցությունը վայելող նոր կառավարության ծրագրում:

«Ժառանգություն». Ոլորտային խնդիրների լուծման բանալին տեսնում է դատավորների և դատախազների նշանակման, առաջխաղացման թափանցիկ ընթացակարգերի սահմանման մեջ: Կոնկրետ քննչական համակարգին կամ նախաքննության փուլում դրսևորվող բացասական երևույթներին չի անդրադառնում: Սակայն առաջ է քաշում քրեական, քրեադատավարական նոր օրենսգրքեր ընդունելու նախապայմանը՝ առանց կոնկրետ խնդիրների շուրջ հստակեցումներ անելու: Ծրագրում սկզբունքային է Հատուկ քննչական ծառայությունը դատախազության համակարգից լիովին հանելու հարցը: Քննչական կոմիտեի ստեղծման հիմնավորումներից մեկը նախաքննություն իրականացնող մարմնի հարաբերական անկախության և ազատության ապահովումն է: Այս առումով կարելի է կուսակցության ծրագրային մոտեցումների և ընդունված փաթեթի տրամաբանության միջև որոշակի ընդհանրություն տեսնել: Սակայն «Ժառանգությունը» կոնկրետ ՀԲԾ-ի՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի առանցքային դերակատար կառույցի կարգավիճակը բարձրացնելու, քան նախաքննությանն անդրադառնալու նպատակ է հետապնդում:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԿ. Խորհրդարանական միակ խմբակցությունն է, որը դափափրավական համակարգի բարեփոխումների հարցում հայեցակարգային հստակ մոտեցման համարեքստում թիրախավորում է նախաքննական մեկ միասնական ու ինքնուրույն կառույցի ձեւավորումը թե մինչդարական վարույթի այդ փուլի նկատմամբ ազդեցությունները սահմանափակելու, թե նախաքննության օրինականության նկատմամբ դափափազական հսկողությունն ուժեղացնելու համար: Այս տեսանկյունից օրենսդրական փաթեթը զուտ գաղափարական առումով համապատասխանում է ՀԱԿ-ի ակնկալիքներին: Սակայն մեկ սկզբունքային կետում ակնհայտ է մոտեցումների տարբերությունը. քննչական կոմիտեի համակարգման դաշտ են տեղափոխվում գործող քննչական 5 մարմիններից միայն երկուսը, մինչդեռ ՀԱԿ-ի բարեփոխումների ծրագիրը հիմնված է անխտիր բոլոր գերատեսչական քննչական մարմինները մեկ կառույցի ներքո կենտրոնացնելու գաղափարի վրա: Քվեարկության ժամանակ ՀԱԿ-ն ավելի շատ քաղաքական վերաբերմունք դրսևորեց, քան ծրագրային: Եթե կարելի է առաջին ընթերցման փուլում ՀԱԿ-ի ձեռնպահ քվեարկելը բացատրել նախաքննության միասնականության ապահովումն ըստ էության չլուծելու հանգամանքով, ապա անհասկանալի է երկրորդ և երրորդ ընթերցման փուլերում նույն փաթեթին կողմ քվեարկելու որոշումը:

Բնապահպանական ոլորտ. Սևան

«Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացում նախատեսող օրինագիծն ուղղակիորեն առնչվում է ազգային անվտանգության երկու առանցքային բաղադրիչի՝ պետության պարենային և էկոլոգիական անվտանգությանը: Նախագծի նկատմամբ հանրային մեծ հեղափոխությունը և քաղաքականացված բուռն բանավեճը խորհրդարանում պայմանավորված էին հենց այս հանգամանքով:

Տեղեկանք: Օրենքում կատարված փոփոխություններով նախատեսվում է մինչև 2015թ. հունվարի 1-ը Սեւանա լճից բաց թողնվող ջրի ծավալն ավելացնել 70 մլն խ/մ-ով և տարեկան առավելագույն չափաքանակ սահմանել 240 մլն խ/մ-ը (լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն սահմանաչափը 170 մլն խ/մ է): Օրինագծի նախնական տարբերակով կառավարությունն առաջարկում էր լրացուցիչ ջրառն իրականացնել առաջիկա 5 տարիների ընթացքում՝ մինչև 2019 թվականը: Թեմայի շուրջ կազմակերպված խորհրդարանական լուսմներից, բնապահպանական կազմակերպությունների քննադատությունից հետո գործադիրը համաձայնեց սահմանափակվել 1 տարի ժամկետով: Կառավարության նախաձեռնության մեջ ջրառի ծավալն ի սկզբանե 240 մլն խ/մ էր, և խորհրդարանում ծավալի փոփոխության շուրջ քննարկումներ չեն եղել: Վերջին պահին կառավարության առաջարկով 240-ը դարձավ 270 մլն խ/մ: Սևանա լճից ջրառի տարեկան չափաքանակի մոտ 40%-ով ավելացման պահանջը գործադիրը հիմնավորում էր Արարատյան դաշտավայրի արտեզյան ավազանում ջրի քանակի կիսով չափ կրճատմամբ, տարածաշրջանում ոռոգման պահանջարկի մեծացմամբ և Սևան-Հրազդան հիդրոէներգետիկ համակարգում ջրի կորստի դինամիկայի աճով նախատեսված 7%-ի փոխարեն մոտ 18%:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գնահատականներ փորձագիտական վերլուծությունից

(փորձագիտական վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների փորձագիտական ու համալիր ծրագիրը թեպետ ներկայացված է առանձին օրենքի տեսքով, սակայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի անբաժանելի մասն է: Սա նշանակում է, որ ո՛չ կառավարությունը, ո՛չ Ազգային ժողովը իրավունք չունեն այնպիսի փոփոխություններ և լրացումներ կատարել «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների փորձագիտական ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքի մեջ, որոնք կհակասեն «Սևանա լճի մասին» օրենքին: Ո՛չ ՀՀ կառավարությունը, ո՛չ ՀՀ Ազգային ժողովը իրավունք չունեն անտեսել Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կարծիքը, որի իրավասություններն ամրագրված են «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով: Իսկ հանձնաժողովը հատուկ պայման էր դրել թույլ չտալ լճի մակարդակի բացասական հաշվեկշիռ 170 միլիոն խմից ավելի մեծ ծավալով ջրբացթողումների դեպքում:

Սևանա լճի խնդիրը նախընտրական ծրագրերում

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների փորձագիտական ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ նախատեսող օրինագիծն ընդունվեց 2014թ. հունիսի 20-ի արտահերթ նստաշրջանում 67 «կողմ» ձայնով, առանց «դեմ»-ի ու «ձեռնպահ»-ի: Բվեարկությանը մասնակցեց միայն Հանրապետական խմբակցությունը: Առաջին ընթերցմամբ օրինագիծն ընդունվել էր ապրիլի 29-ին՝ ձայների 96 կողմ, 14 դեմ, 4 ձեռնպահ հարաբերակցությամբ: Կողմ էին քվեարկել ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն, ձեռնպահ՝ ՕԵԿ-ը:

Առանց բացառության՝ բոլոր խմբակցությունների ծրագրերին հատուկ են էկոհամակարգի նկատմամբ մոտեցումների ընդհանրականությունը և ոլորտային կոնկրետ թիրախների, մարտահրավերների բացակայությունը: Ծրագրերում բացակայում է նաև էկոմիջավայրի և գյուղատնտեսության ներքին տրամաբանական կապը: Շրջակա միջավայրի պահպանության, բնական պաշարների օգտագործման խնդիրը գրեթե չի դիտարկվում անվտանգության տեսանկյունից:

«Ժառանգություն». Խորհրդարանական միակ խմբակցությունն է, որը ծրագրում առաջ է քաշում «Սևանա լճի մասին», «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների փորձագիտական ու համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքները վերանայելու խնդիրը, սակայն չի նշում այդ փոփոխությունները կատարելու շարժառիթներն ու նպատակները, ակնկալվող արդյունքները: Հետևաբար, դժվար է ենթադրել, թե որքանով է կառավարության ներկայացրած նախագիծը բխում ծրագրի տրամաբանությունից: «Ժառանգությունը» դեմ է արտահայտվել նախագծին՝ ավելի շարժելով քաղաքական նկատառումներից և իբրև ընդդիմություն՝ իր կարգավիճակից:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՅԴ-ն, ի տարբերություն խորհրդարանական մյուս կուսակցությունների, պաշտպանում է տնտեսական բոլոր նախագծերը էկոլոգիական փորձաքննության ենթարկելու և դրանց արդյունքները լայն հասարակայնությանը հասանելի դարձնելու սկզբունքը: Ըստ էության՝ խոսքը հանրային վերահսկողության մեխանիզմների կիրառման մասին է, որի համատեքստում օրինագծի ներկայացման ձևաչափը, բնապահպանական փորձաքննության բացակայությունը, հանրային քննարկումների ենթարկված չլինելու հանգամանքն ինքնին հակասում էին ՀՅԴ-ի ծրագրային սկզբունքներին: Այս տեսանկյունից օրինագծին դեմ քվեարկելու խմբակցության որոշումը տրամաբանական էր:

ՀԱԿ. Ծրագրային նշանակություն ունեցող հայեցակարգերում կոնկրետ Սևանա լճի էկոհամակարգի պահպանման հարցը, ինչպես նաև անապատացման, ստորգետնյա ջրերի օպտիմալ օգտագործման խնդիրներն արտացոլված չեն ո՛չ բնապահպանական և ո՛չ էլ գյուղատնտեսական նշանակության առումով: Դա այն դեպքում, երբ, ի տարբերություն մյուս խմբակցությունների, ՀԱԿ-ը նախընտրական ծրագրային հիմնադրույթների առանցքում դրել է իր կողմից մշակված էկոլոգիական անվտանգության հայեցակարգը, այսինքն, բնապահպանության հիմնահարցերին մոտեցել է անվտանգության տեսանկյունից: Փոխարենը խորհրդարանական քննարկումների ժամանակ հիմնական շեշտադրումներն արել է ստեղծված իրավիճակում կոռուպցիոն ռիսկերի առկայության, համակարգի անարդյունավետ կառավարման և պետական վերահսկողության բացակայության հարցերի վրա, որոնք և ուղղորդել են խմբակցությանը նախագծին դեմ արտահայտվելու հարցում:

ՕԵԿ-ը նպատակային է համարում Սևանա լճի պահպանման և էկոհավասարակշռության վերականգնման հարցում ծրագրային մոտեցումը ցուցաբերելը, ինչն ամբողջությամբ բխում է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատվելու մասին» օրենքի տրամաբանությունից: Պետք է ենթադրել, որ ծրագրի հիմքում ընկել է գործող օրենսդրական կարգավորմամբ բավարարվելու մոտեցումը:

Խուսափելով մասնակցել խորհրդարանական քննարկումներին՝ ՕԵԿ-ը ձեռնպահ է քվեարկել կառավարության ներկայացրած նախագծին: Սա ոչ թե անտարբերության դրսևորում է, այլ քաղաքական դիրքորոշում: 2012թ., իբրև իշխող կոալիցիայի անդամ, ՕԵԿ-ը կողմ էր արտահայտվել Սևանից ոռոգման նպատակով ավելի մեծ քանակությամբ ջուր բաց թողնելու կառավարության օրենսդրական նախաձեռնությանը: Անհասկանալի կլիներ, եթե այս անգամ դեմ արտահայտվեր:

ԲՀԿ. Թե ի՞նչ է կուսակցությունը հասկանում էկոլոգիական անվտանգություն հասկացության ներքո և ի՞նչ դեր է դրանում հատկացնում Արարաբյան դաշտի ջրազրկման պարճառահետևանքային կապի ազդեցությանը և Սևանա լճի էկոհամակարգին, որևէ համատեքստում ծրագրում հստակեցված չէ: Այս փաստը ձկուռություն հանդես բերելու հնարավորություն է ստեղծում, ինչը և դրսևորվել է օրինագծի քվեարկության ժամանակ: ԲՀԿ-ն հիմնահարցը դիտարկել է հիմնականում հետևանքների կանխարգելման տիրույթում:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ելնելով դրանից և առաջնորդվելով գյուղական համայնքների և տնտեսությունների ոռոգման կարիքների և պահանջարկի բավարարման առաջնայնությունից՝ խմբակցությունն առաջին ընթերցման ժամանակ ողջ կազմով կողմ է քվեարկել նախագծին: Իր այս դիրքորոշումը պայմանավորել է օրենքի նախագծում մեկ, բայց կարևոր փոփոխությամբ՝ Սևանից ջրառի ավելացման համար կառավարության կողմից նախատեսած 5 տարվա փոխարեն մեկամյա ռեժիմ սահմանելու մասին առաջարկությունը գործադիրի կողմից ընդունելու փաստով: Ի դեպ, 2012թ.-ին, ոռոգման պահանջարկը բավարարելու նպատակով Սևանից ջրառի չափաքանակի՝ սահմանվածից գրեթե կրկնակի ավելացման կառավարության նախագծին ԲՀԿ-ն կողմ էր քվեարկել: Կարելի է համարել, որ խնդրո առարկայի նկատմամբ խմբակցության մոտեցման մեջ էական շեղումներ չեն արձանագրվել:

ՀՀԿ. Քաղաքական մեծամասնությունն իր նախընտրական ծրագրում դնում է Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության խնդիրը, սակայն օրինագիծը, որը ներկայացվել է մեծամասնության վստահությունը վայելող կառավարության կողմից, իր բնույթով և նպատակներով հակասում է այս տեսլականին: Սխալ կլիներ կառավարության նախաձեռնությունը պաշտպանելու ՀՀԿ-ի դիրքորոշումը գնահատել զուտ նախընտրական ծրագրի պրիզմայով: Արարարյան դաշտի ջրագրկման և անապատացման վտանգը առավելապես սրվել է ծրագիրը շրջանառության մեջ դրվելուց հետո: Նոր կառավարության ծրագրում, որը ևս հաստատվել է ԱԺ այս նստաշրջանի ընթացքում, սույն հիմնախնդիրը, ինչպես նաև դրա հաղթահարման որոշ մեխանիզմներ գրել են իրենց արտացոլումը (Արարարյան դաշտի ջրավազանային կառավարման պլանի մշակում, ջրօգտագործման հաշվառման ավտոմատ կառավարման համակարգի ստեղծում՝ ստորերկրյա ջրային հաշվեկշռի վերականգնման և վերականգնվող ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման նպատակով): Այս իմաստով ՀՀԿ-ի պարագայում առաջին պլան է մղվում այդ մեխանիզմների գործնական կիրառման և արդյունավետության նկատմամբ վերահսկողության իրականացումը: Սակայն օրինագծի շուրջ խորհրդարանական քննարկումներում մեծամասնության կողմից արտեզյան ջրերի մակարդակի նվազման, էներգետիկ և ոռոգման նպատակով բաց թողնվող ջրի հսկայական կորուստների բուն պարճառների օբյեկտիվ քննարկումից հետևողականորեն խուսափելու իրողությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական մեծամասնությունն առաջնորդվել է ավելի շատ կառավարության նախաձեռնությունը պաշտպանելու ավանդական «սկզբունքով»:

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

5-րդ գումարման խորհրդարանի հետ իր գործունեությունը սկսած էթիկայի հանձնաժողովի նկատմամբ հանրային վստահության մակարդակը, ըստ ստացված դիմումների քանակի, աստիճանաբար նվազում է. երկրորդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովն ստացել է 13 դիմում, երրորդ նստաշրջանում՝ 6, չորրորդում՝ 2, իսկ հինգերորդում՝ 3 դիմում: 5-րդ նստաշրջանի ընթացքում քննարկված 3 դիմումներից 2-ի վերաբերյալ էթիկայի հանձնաժողովը ընդունել է դրանց քննությունը կարճելու որոշումներ և միայն 1-ի դեպքում է որոշել, որ պարզամավորը՝ Առաքել Մովսիսյանը, խախտել է էթիկայի նորմերը:

- ▲ 5-րդ գումարման Ազգային ժողովի 5-րդ նստաշրջանում էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը ձևավորվեց ուշացումով. գարնանային նստաշրջանը մեկնարկեց 2014թ. փետրվարի 3-ին, իսկ էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը առաջին նիստը հրավիրեց մարտի 17-ին:
- ▲ ՀԱԿ-ը շարունակեց բոյկոտել հանձնաժողովի աշխատանքները, ու հանձնաժողովը դարձյալ ղեկավարեց իշխանական ամենամեծ խմբակցության «Հանրապետականի» ներկայացուցիչը. Դավիթ Հարությունյանին հանձնաժողովում փոխարինեց Հովհաննես Սահակյանը:
- ▲ Հանձնաժողովը, ինչպես նախորդ երկու նստաշրջանների ընթացքում, գործեց 5-հոգանոց կազմով, որում, ՕԵԿ-ի ընդդիմություն դառնալուց հետո, իշխանությունը ներկայացված էր ընդամենը 1 ՀՀԿ-ականով: Ընդդիմություն-ոչ ընդդիմություն հավասարակշռությունը հանձնաժողովում ապահովելու նպատակով իշխանությունը չչորապեց հանձնաժողովի կազմը համալրել ևս երկու ՀՀԿ-ականով: Հիմնավորմամբ, թե Աժ կանոնակարգ օրենքը ենթադրում է հանձնաժողովի ձևավորում նստաշրջանի մեկնարկին, որոշվեց համալրումը կատարել աշնանային նստաշրջանի սկզբում:
- ▲ Առաջին անգամ էթիկայի հանձնաժողովը դիմում ստացավ պարզամավորից՝ իրեն իսկ առնչվող խնդրի կապակցությամբ:

5-րդ գումարման 5-րդ նստաշրջանի ընթացքում էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը հրավիրել է 7 նիստ՝ քննարկման առարկա դարձնելով ընդամենը 3 դիմում. «Սինջար եզդիների ազգային միավորում» և «Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ-ների դիմումը՝ ընդդեմ ՀՀԿ-ական պարզամավոր Մանվել Բաղդեյանի, լրագրողներ Գրիշա Բալասանյանի, Աննա Եղիազարյանի, Սարգիս Խանդանյանի և Հակոբ Կարապետյանի դիմումը՝ ընդդեմ ՀՀԿ-ական Առաքել Մովսիսյանի, և պարզամավոր Նիկոլ Փաշինյանի դիմումը, որը վերաբերում էր հենց իրեն՝ Փաշինյանին:



ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Քննարկված 3 դիմումներից միայն 1-ի դեպքում է հանձնաժողովը որոշել, որ պարզամավորը՝ Առաքել Մովսիսյանը, խախտել է էթիկայի նորմերը՝ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով քննարկման մասնակիցների ու դիմողների նկատմամբ: Խոսքը 2013 թվականի դեկտեմբերի 13-ին գազային համաձայնագրերի վավերացման ընթացքում գրանցված հայտնի միջադեպի մասին է, երբ Մովսիսյանը, նկատի ունենալով դահլիճ մտած լրագրողներին, գոռացել էր՝ «ես կապիկներին դուրս արեք սրույ»: Հանձնաժողովի որոշումը բաժանվեց պարզամավորներին, քանի որ հանձնաժողովի նախագահը հարկ չհամարեց այն ընթերցել ԱԺ ամբիոնից, չնայած ԱԺ կանոնակարգը նման հնարավորություն տալիս էր: Անպատասխան մնաց նաև դիմումատու լրագրողների պահանջը՝ Առաքել Մովսիսյանի՝ իրենցից ներողություն խնդրելու մասին, քանի որ, ըստ որոշման, հանձնաժողովը կարգապահական պարասխանադրության ենթարկելու իրավասություն չունի:

3 դիմումներից 2-ի վերաբերյալ հանձնաժողովը ընդունել է դրանց քննությունը կարճելու որոշումներ:

Դրանցից մեկը հանձնաժողովի օրակարգում էր դեռ 2013 թվականի դեկտեմբերից: Այն վերաբերում էր ՀՀԿ-ական պարզամավոր Մանվել Բաղեյանին: Ըստ դիմումատուների՝ «Սինջար եզդիների ազգային միավորում» և «Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ-ներ, Բաղեյանը խախտել է պարզամավորի էթիկայի կանոնները ու վիրավորել եզդի քաղաքացիներին՝ լրագրողների հետ զրույցում ասելով. «Որ փողոցում կանգնած մի եզդի էդ հարցը տար, կգարմանայի, բայց դուք իսկականի՞ց տենց եք մտածում»: Հանձնաժողովը ծանոթացել էր թեմային առնչվող մամուլի հրապարակումներին ու եզրակացրել, որ պարզամավոր Բաղեյանը վիրավորելու նպատակ կամ մտադրություն չի ունեցել, այսինքն, «նրա հայտնած կարծիքում բացակայում են դիտարկությունը կամ կանխամտածված գործողությունը»: Իսկ վիրավորելու մասով հանձնաժողովը նշել էր, որ վիրավորանքի առկայության կամ դրա բացակայության մասին որոշում կայացնելու իրավասություն չունի:

Երրորդ դիմումի հեղինակը պարզամավոր Նիկոլ Փաշինյանն էր: Դիմումը վերաբերում էր իր իսկ կողմից «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագրական խորհուրդը ղեկավարելու հնարավորությանը: Դիմումի քննությունը հանձնաժողովը կարճեց՝ հիմնավորմամբ, որ պարզամավորի ստեղծագործական կամ գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ եզրակացություն կարող է ներկայացել միայն այն դեպքում, երբ այդ աշխատանքը վճարովի է, իսկ Փաշինյանի աշխատանքը խորհրդում լինելու էր բացառապես ստեղծագործական, անվճար հիմունքներով:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

«Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքում կադարված փոփոխությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրական դատարանի 02.04.2014թ. ՍԴՈ-1142 որոշմանը

Արդակ Զեյնալյան

«Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան ՀԿ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.06.2014թ. ընդունվեց օրենսդրական փաթեթ՝ «Կուրակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը (այսուհետև՝ ՀՕ-67-Ն օրենք) և փոփոխություններ ու լրացումներ ՀՀ ևս փաստ օրենքներում: Օրենսդրական փոփոխությունների պատճառը ՀՀ Սահմանադրական դատարանի 02.04.2014թ. (ՍԴՈ-1142) որոշումն էր, որով «Կուրակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածներ ձանաչվեցին ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ համապատասխանող, սակայն այդ որոշման մեջ դրանց բացահայտված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ նաև նախանշել էր այն հնարավոր լուծումները, որոնց պարագայում իրավական լուծումները չեն հակասի ՀՀ սահմանադրությանը:

Սակայն մինչև նոր ընդունված օրենսդրական փաթեթի և ՍԴՈ-1142 որոշման համեմատությանն անցնելը, հարկ ենք համարում անդրադառնալ դրա ընդունման և «օրենք» հանդիսանալու հիմնախնդրին:

1. Հանրային իշխանության ակտ հանդիսացող օրենքների ի հայտ գալու (դրանք նախաձեռնելու, ընդունելու և կիրառելու) հստակությունն ու դրանց բովանդակության որոշակիությունը հիմնարար նշանակություն ունեն: Օրենքները, որպես համապարտադիր վարքագծի կանոններ ներառող իրավական ակտեր, պետք է ընդունված լինեն, իսկ հանրությունը պետք է իրազեկված լինի դրանց գոյության մասին՝ պարզաձև ընթացակարգով, որպեսզի հնարավոր լինի առանց խոչընդոտների, հուսալի կերպով հաղորդակից դառնալ դրանց բովանդակությանը (իրավական հստակություն), իսկ դրանց բովանդակությունը պետք է ընկալելի լինի հասցեատերերի համար, գերծ լինի համակարգային հակասություններից, չքողարկի իր իրավական կարգավորումը և հնարավորություն ընձեռի կատարելու դրանք (իրավական որոշակիություն):

Սահմանադրական այս սկզբունքների երաշխավորմանն ու ապահովմանն են կոչված, ի թիվս այլոց՝ «Իրավական ակտերի մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքները, ՀՀ նախագահի 18.07.2007թ. «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» իրամանագիրը: Այս իրավական ակտերի համաձայն՝ կառավարությունը պարտավոր էր կազմակերպել սույն վերլուծության առարկա օրենսդրական փաթեթում ընդգրկված օրենքի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

Ազդեցության գնահատման եզրակացությունը պետք է ներառի կարգավորման արդյունքները, նախատեսվող իրավական ակտը չընդունելու դեպքում համապատասխան բնագավառի վրա ազդեցության գնահատման արդյունքները, այն դեպքում, երբ ազդեցության գնահատողի կարծիքով և կատարված հաշվարկների ու հետազոտությունների հիման վրա առաջարկվում է կարգավորման այնպիսի տարբերակ, որն ավելի բարենպաստ է համապատասխան բնագավառի համար, նշված տարբերակը՝ համապատասխան հիմնավորումներով, նորմատիվ իրավական ակտի կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքները գնահատելու ժամանակացույցը, տվյալ բնագավառի քաղաքականության, ինչպես նաև համեմատական վիճակագրական վերլուծություններ:

Կառավարությունը նախագիծը ազդեցության գնահատողներին ներկայացնելու հետ մեկտեղ պետք է կազմակերպեր նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Հանրային քննարկումների նպատակը նախագծի մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկումն է, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքումն ու դրանց հիման վրա օրենքների նախագծերի անհրաժեշտ լրամշակման աշխատանքների իրականացումը:

Օրենսդրական փաթեթն իր մեջ պետք է ներառեր առաջարկվող նախագիծը. նախագծի ընդունման հիմնավորումը, ներկայացվող հարցի կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների պահանջի անհրաժեշտությունը, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին տեղեկանքը, նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը (կառավարության որոշման կամ իրավական այլ ակտի ընդունման նախատեսվող ժամկետը), իրավական-փորձագիտական եզրակացությունը, ամփոփաթերթ՝ նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ (չընդունման պատճառների հիմնավորմամբ), ընդ որում՝ ամփոփաթերթում ներառվում են հանրային քննարկումների հետևանքով ստացված այն դիտողությունները և առաջարկությունները, որոնք ընդունվել են: Փաթեթում պետք է ներառվեին ՀՀ արդարադատության նախարարի և շահագրգիռ նախարարների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կարծիքները՝ առարկությունները և առաջարկությունները (տեղեկանք՝ ընդունված առարկությունների և առաջարկությունների, ինչպես նաև առկա տարաձայնությունների մասին՝ չընդունման պատճառների հիմնավորմամբ): Փաթեթը պետք է Ազգային ժողովում դրվեր շրջանառության մեջ, փորձաքննություն անցնելու ԱԺ աշխատակազմում՝ ՀՀ Սահմանադրությանը, միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին, ՀՀ վավերացրած միջազգային

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

պայմանագրերին, օրենքներին և օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխանելու, այդ նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ օրենքների և Ազգային ժողովի որոշումների կամ այդպիսի օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության տեսակետից: Օրակարգ մտած փաթեթին պետք է կցված լինեն ԱԺ աշխատակազմի փորձաքննության եզրակացությունը:

21.06.2014թ. ընդունված օրենսդրական փաթեթը Ազգային ժողով ներկայացվել և օրակարգ է մտել առանց օրենքով նախատեսված գործողությունների, այդ թվում՝ հանրային քննարկումների, փորձաքննությունների և համապատասխան եզրակացությունների, չի կատարվել փոփոխություն 2014 թ. պետական բյուջեի մասին օրենքում: Այն դեպքում, որ հանրային իրազեկվածության խնդիրը կարևորել էր նաև ՀՀ Սահմանադրական դատարանը 24.01.2014թ ՍԴԱՈ-3 աշխատակարգային որոշմամբ՝ « ... կուրակային կենսաթոշակների համակարգի կիրառման հաջողությունը մեծապես պայմանավորված է այդ համակարգի նկատմամբ բնակչության պատշաճ իրազեկվածությամբ ու վստահությամբ»: Ուստի՝ օրենքների ընդունման համար սահմանված կարգի խախտմամբ ընդունված օրենքները չեն կարող համարվել իրավական որոշակիության, պատշաճ «օրենքի որակ» սահմանադրական սկզբունքներին համապատասխանող:

2. ՀՕ-67-Ն օրենքով (մեկ հոդվածով) նոր խմբագրմամբ շարադրվեց «Կուրակային կենսաթոշակների մասին» ՀՀ 30.12.2010թ. օրենքը, և ուժը կորցրած ճանաչվեց՝ «Կուրակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ 15.05.2014թ. օրենքը: 30.12.2010թ. ՀՕ-244-Ն օրենքը բաղկացած էր 90 հոդվածից, իսկ 21.06.2014թ. ՀՕ-68-Ն օրենքով փոփոխվածը՝ 81 հոդվածից: Վերջինիս գերակշռող հոդվածների վերնագրերը, բովանդակությունը, մասերն ու ենթակետերը փոփոխված են՝ պահպանելով 30.12.2010թ. ՀՕ-244-Ն օրենքի համարները՝ մինչև 81-րդ հոդվածը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է օրենսդրական տեխնիկայի կանոնները, օրինակ՝

«4. Ուժի մեջ մտած իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելիս փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի, պարբերությունների համարների փոփոխություն չի կատարվում:

5. Գործողությունը դադարեցված բաժնի, գլխի, հոդվածի, մասի, կետի, ենթակետի կամ պարբերության փոխարեն նույն համարով այլ բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն չի կարող ընդունվել:

6. Իրավական ակտի բաժնի, գլխի, հոդվածի, մասի, կետի, ենթակետի կամ պարբերության գործողության դադարեցման դեպքում իրավական ակտի մյուս հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների համարները համապատասխանաբար չեն փոփոխվում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

7. Իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների միջև համապատասխանաբար նոր բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել միայն լրացուցիչ համարով: Այս դեպքում նա բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների համարի փոփոխություն չի կատարվում:

8. Փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտում փոփոխությունների կամ լրացումների մասով փոփոխություն կամ լրացում չի կատարվում: Նոր փոփոխությունները կամ լրացումները կատարվում են միայն հիմնական ակտում»:

Նոր խմբագրմամբ 30.12.2010թ. ՀՕ-244-Ն օրենքը բացարձակապես նոր՝ այլ օրենք է, սակայն ներկայացվում է՝ որպես ինկորպորացիա, պահպանելով միայն ընդունման փարեթիվը, հերթական համարը և վերնագիրը: Նման մեթոդաբանությամբ կարելի կլիներ 30.12.2010թ. ընդունված «Կուրակային կենսաթոշակների մասին» ՀՀ ՀՕ-244-Ն օրենքը նոր խմբագրմամբ ընդունել, օրինակ՝ որպես՝ «Առողջապահության մասին» կամ «Պետական սահմանների մասի» ՀՀ օրենք, պահպանելով ընդունման փարեթիվը և հերթական համարը:

Օրենսդրական տեխնիկայի միասնական կանոնների պահպանումը կոչված է՝ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի ապահովմանը, այսպիսի իրավական դիրքորոշում Սահմանադրական դատարանն արտահայտել է իր՝ 25.02.2011թ. ՍԴՈ-943 որոշման մեջ. «... ցանկացած իրավական ակտ ենթակա է իրավական տեխնիկայի միասնական կանոններին [...], որի նպատակը նաև դրանց միակերպ, ամբողջական ընկալման ապահովումն է անձանց և իրավակիրառող սուբյեկտների կողմից (այդ հիմնախնդրին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում ՍԴՈ-630, ՍԴՈ-720, ՍԴՈ-723, ՍԴՈ-780 և այլն)»:

Սահմանադրական դատարանն օրենսդրական միասնական տեխնիկայի կանոնների խախտումներ պարունակող բազմաթիվ նորմեր է ձանաչել ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր: Ուստի՝ օրենսդրական տեխնիկայի միասնական կանոնների, այսինքն՝ իրավական որոշակիության սկզբունքի խախտում պարունակող իրավական ակտերը հակասում են ՀՀ սահմանադրությանը և չպետք է իրավահարաբերությունների կարգավորման հիմք հանդիսանան, կիրառվեն անձանց նկատմամբ:

3. Վերոգրյալ երկու ենթաբաժիններում կատարված եզրահանգումների հիման վրա 21.06.2014թ. ընդունված օրենքների Սահմանադրությանը, միջազգային իրավունքի նորմերին, ՀՀ Սահմանադրական դատարանի 02.04.2014թ ՍԴՈ-1142 որոշմանը համապատասխանելու բովանդակային վերլուծությունը կարող է ունենալ «օրենքի նախագծերի» վերաբերյալ կատարված վերլուծության կարգավիճակ:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

Սահմանադրական դատարանը 02.04.2014թ. ՍԴՈ-1142 որոշմամբ Սահմանադրության սեփականության, սոցիալական ապահովության, բացառապես հարկեր, փուլեր, պարտադիր այլ վճարումներ կատարելու պարտականություն ունենալու իրավունքն ամրագրող հոդվածներին հակասող և անվավեր էր ճանաչել Կուրակային կենսաթոշակների մասին օրենքի «պարտադիր բաղադրիչը», քանի որ այն ենթադրում է մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ Սահմանադրության 45-րդ հոդվածում «... նշված հարկերը և փուլերը ևս պարտադիր վճարումներ են, և, հետևաբար, հիշյալ հոդվածում նշված պարտադիր այլ վճարումները, հարկերից և փուլերից փարբերվելով հանդերձ, վերջիններիս հետ պետք է ունենան ընդհանուր հարկանիշներ»:

Հարկային օրենսդրության վերլուծության արդյունքների հիման վրա սահմանադրական դատարանը ՍԴՈ-1142 որոշման մեջ արձանագրել է, որ «Սահմանադրության 45-րդ հոդվածում մատնանշված պարտադիր վճարները՝
ա) կրում են հանրային իրավական բնույթ, այսինքն՝ սահմանվում և վճարվում են հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում,
բ) նախատեսված են պետական կամ համայնքային բյուջե մուկադրվելու համար»:

Այնուհետև Դատարանն արձանագրել է, որ կուրակային կենսաթոշակների մասին օրենքում նախատեսված՝ պարտադիր կուրակային վճարները հանդես չեն գալիս որպես սոցիալական վճարներ, խելամիտ հարաբերակցության մեջ դրված չեն սոցիալական ապահովության նպատակ հետապնդող հարկային այլ վճարների հետ, չեն փոխանցվում պետական բյուջեի հատուկ հաշվին և պայմանագրային հիմունքներով կամ օրենքով նախատեսված հստակ երաշխիքներով ու պետության պատասխանատվությամբ չի, որ տրվում են կառավարման:

Օրենքում «պարտադիր վճար»-ը փոխարինվել է «սոցիալական վճար» եզրույթով, սակայն մասնակցի կողմից այդ վճարը կատարելը պահպանել է «պարտավորության» կարգավիճակը: Սահմանադրական դատարանը 14.06.2011թ. ՍԴՈ-975 որոշման մեջ գնահատել է «պարտականություն» և «պարտավորություն» հասկացությունների մեկնաբանման ու կիրառման պրակտիկան, բացահայտել է դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սահմանադիրը «պարտականություն» հասկացությունն օգտագործում է օրենքով սահմանվող պարտականության կամ միջազգային պայմանագրով սահմանվող՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականության առնչությամբ, իսկ «պարտավորություն» հասկացությունն օգտագործում է միջազգային պայմանագրով պետության համար պարտավորության առնչությամբ և մեկ դեպքում՝ Սահմանադրության 16-րդ հոդվածի 5-րդ մասում, քաղաքացիաիրավական հարաբերությունների առնչությամբ:



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

Ղափարանը Քաղաքացիական օրենսգրքի մի շարք հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում հանգել է հետևության, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում պարտավորության ստանձնումը ոչ թե իրավունքի սահմանափակում է, այլ իրավունքի իրացման պայման ու երաշխիք, պարտականությունները ծագում են օրենքով այլ իրավականակտերով նախատեսված հիմքերից: ՀՀ Սահմանադրության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դափարանը գտել է, որ «պարտականություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է Սահմանադրությամբ և օրենքներով՝ իրավունքի սուբյեկտի կամքից անկախ, վերջինիս համար սահմանված պարտադիր վարքագծի կանոն: «Պարտավորություն» հասկացությունն իր հերթին ենթադրում է իրավունքի սուբյեկտի կողմից իրավունքի ուժով կամ իր ազատ կամահայտնությամբ և սեփական գործողությունների շնորհիվ ստանձնված համապատասխան վարքագիծ:

Նույն որոշման եզրափակիչ մասում Սահմանադրական դափարանը սահմանել է «իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը»:

Սահմանադրական դափարանի իրավական դիրքորոշումներից բխում է, որ «սուցիալական վճար» կատարելը՝ լինելով «պարտավորություն», կրում է քաղաքացիաիրավական բնույթ, չի կրում «հանրային իրավական բնույթ» և չի վճարվում հանրային իրավական բնույթի հասարակական հարաբերությունների շրջանակներում:

Սահմանադրական դափարանի 02.04.2014թ. ՍԴՈ-1142 որոշման մեջ նշված Սահմանադրության 45-րդ հոդվածում գործածվող պարտադիր վճարի մյուս հատկանիշը այդ վճարների պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվելն է: Ինչպես վերևում փաստվեց՝ օրենսդրական փաթեթում բացակայել է 2014 թվականի բյուջեի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը և փոփոխություններ չեն կատարվել պետական բյուջեում. այս փաստը վկայում է այն մասին, որ կուրակային կենսաթոշակի մասին օրենքի «սուցիալական վճարը», անկախ ձևական փոփոխություններից, պահպանել է նույն բովանդակությունը, ինչ հակասահմանադրական և անվավեր ճանաչված օրենքի զուգահեռ դրույթները:

Սա այն առանցքային պայմանն է, որին պետք է բավարարեր «Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքի փոփոխությունների նախագիծն ու դրանք ապահովված չլինելու պայմաններում այլ պայմանների պահպանվածությանն անդրադառնալն իմաստագրվում է:

Պարտադիր աուդիտի վերալուծման հիմնահարցի վերլուծություն. փոփոխություններ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքում

Վիլեն Խաչատրյան Կրթության գիտության թեկնածու, դոցենտ

«Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասում կարարված փոփոխություններով (20.05.2014թ.) սահմանվեցին այն կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել առանց աուդիտորական եզրակացության: Այս դրույթն ուժի մեջ կմտնի 2015 թվականի հունվարի 1-ից:

Պարտադիր աուդիտի ներդրման միջոցով 2009թ.-ից փորձ էր արվում գերխոշոր կազմակերպությունների գործունեությունը դարձնել թափանցիկ, սակայն ինչպես իրական կյանքը սույն փուլում, այս մեթոդով թափանցիկության խնդիրն իր լուծումը չստացավ: Ձևավորվեց աուդիտորական կազմակերպությունների մեծ շուկա, որն, ըստ փորձագիտական գնահատականների, եզրակացություն էր տալիս 870-1000 խոշոր կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Յուրաքանչյուր եզրակացության արժեքը կազմում էր 1.0 մլն դրամից մինչև 30.0 մլն դրամ՝ կախված կազմակերպության մեծությունից: Եթե փորձենք պայմանականորեն հաշվել աուդիտորական ընկերությունների գործունեության արդյունքում ստացվող հասույթը, ապա կունենանք 2-14 մլրդ դրամի շրջանակներում տարանվող գումար, որը բաշխվում էր մոտ 40 աուդիտորական կազմակերպությունների միջև: Խնդիրը կարող ենք դիտարկել 2 խմբերի՝ աուդիտորների և խոշոր կազմակերպությունների շահերից ելնելով: Կարելի է ենթադրել, որ աուդիտորական կազմակերպությունները չեն ցանկանա կորցնել շուկայի այս սեգմենտը և գործունեությունը միանգամից դադարեցնելու փոխարեն քայլեր կձեռնարկեն այլընտրանքային տարբերակներ գտնելու ուղղությամբ: Մյուս կողմից խոշոր կազմակերպությունները, ազատվելով պարտադրված աուդիտի ինստիտուտից, չեն ցանկանա ֆինանսական լրացուցիչ բեռ ունենալ: Չնայած առկա են մի շարք ոլորտներ (պետական գնումների մրցույթներ), որոնք խոշոր կազմակերպություններին ստիպում են պարտադիր աուդիտ անցնել, այսինքն՝ այս սահմանափակումը մասնակիորեն է տարածվում խոշոր կազմակերպությունների վրա: Կարելի է ենթադրել, որ մրցակցությունն աուդիտորական կազմակերպությունների միջև կմեծանա, և այն կազմակերպությունները, որոնք զբաղված են պարզապես եզրակացություններ հրապարակելով, դուրս կմղվեն շուկայից, թեև չի բացառվում, որ սրվերային գործունեություն իրականացնող խոշոր կազմակերպություններին նման աուդիտորական կազմակերպությունների ծառայություններն անհրաժեշտ լինեն:

Ենթադրելի է, որ աուդիտորական կազմակերպությունները ստիպված կլինեն վերանայել իրենց գործունեությունը, ինչը կարող է նաև որակյալ աուդիտորների արտահոսք առաջացնել: Իսկ կրթության գիտության աուդիտի դերի նվազման համարեքստիմում կթուլացնեն զգոնությունը, ինչը նրանց ֆինանսական գործունեությունը վերահսկելու, առկա խնդիրները բացահայտելու առումով դժվարություններ կառաջացնի: Երաժրեքիր է նաև այն, որ պարտադիր աուդիտի պահանջի վերալուծման առնչվող փոփոխությունները կառավարությունը խորհրդարան էր ներկայացրել խնդրի հետ որևէ առնչություն չունեցող օրինագծի՝



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

մաքսային օրենսդրությանը վերաբերող փոփոխությունների հետ մեկ փաթեթով: Հարցը կրեդափոխվեր բուրոսովին այլ հարթություն, եթե դիտարկվեր կառավարության հեղինակած նոր օրենսդրական նախաձեռնության՝ «Այլընտրանքային ստուգումների մասին» օրինագծի հետ, քանի որ տրամաբանական կապեր փնտրելու պարագայում այն ավելի մեծ առնչություն ունի պարտադիր աուդիտից հրաժարվելու կառավարության մոտեցմանը:

«Այլընտրանքային ստուգումների մասին» օրինագծով, որը դրվել է շրջանառության մեջ, բայց դեռևս չի քննարկվել, նախատեսվում է նոր ինստիտուտի՝ այլընտրանքային ստուգումների համակարգի ներդրում: Ըստ նախագծի՝ տնտեսվարողները կարող են արտահերթ ստուգման կամ վերստուգման հայտ ներկայացնել հարկային մարմիններին, սակայն դա կդիտարկվի որպես ծառայություն ու կիրականացվի վճարովի հիմունքներով: Առաջարկվում է վճարը սահմանել 10 մլն դրամ, հետևաբար՝ սա մի ծառայություն է, որը հասու կլինի միայն խոշոր տնտեսվարողներին: Գումարները պետք է փոխանցվեն ՊԵԿ-ի արտաբյուջեային հաշիվներին (զարգացման ֆոնդին): Այսինքն՝ այն գումարները, որոնք աշխատում էին աուդիտորական կազմակերպությունները խոշոր կազմակերպությունների ստուգումների արդյունքում, ուղղվելու են ՀՀ ՖՆ (ՊԵԿ-ի) արտաբյուջեային հաշիվներ (զարգացման ֆոնդ): Սա նշանակում է, որ պարտադիր աուդիտի վերացումը ոչ այլ ինչ էր, քան աուդիտորական կազմակերպությունների հասույթը օրենսդրական փոփոխությունների ճանապարհով դեպի հարկային համակարգի զարգացման ֆոնդ ուղղվելու քայլ:

«Այլընտրանքային ստուգումների մասին» օրինագիծը բավական ռիսկային է, քանի որ ըստ էության վերացնում է անկախ աուդիտի գաղափարը. այլընտրանքային ստուգման միջոցով կազմակերպությունները, փաստորեն, օրինական միջոցներով իրենց ապահովագրում են հարկային ստուգումներից և ստուգանքներից, իսկ հարկային մարմինը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն: Վերանում է մի ինստիտուտ, որը հարկային մարմիններից աուդիտորական եզրակացությունների միջոցով դատական կարգով պաշտպանվելու և տրված եզրակացության համար պարասխանավորություն կրելու համակարգն է:

Ամփոփելով նշենք, որ դեռևս հայեցակարգային մոտեցումների հստակեցման կարիք կա. անհրաժեշտ է կողմնորոշվել՝ աուդիտն աջակցող և պարասխանավորություն կրող գործունեություն է, թե՞ ոչ, այլընտրանքային ստուգումն աուդիտին փոխարինող մոտեցում է, թե՞ զուտ բացահայտող գործառույթ և այլն: Անհրաժեշտ է ունենալ հստակ մշակված ճանապարհային քարտեզ, թե որ հաջորդական քայլերով է ապահովվելու ՀՀ-ում աուդիտորական գործունեությունը, խոշոր կազմակերպությունների և հարկային մարմինների միջև համագործակցությունը, հակառակ պարագայում մեկը մյուսին հաջորդող և տրամաբանական կապ չունեցող, ինչպես նաև սուբյեկտիվ գործոններից բխող օրենսդրական նախաձեռնությունները և փոփոխությունները հաջորդելու են իրար՝ առանց հստակ գաղափարական և հայեցակարգային մոտեցումների:

«Շքեղության հարկի» գաղափարախոսության փոփոխությունը և հայեցակարգային մոտեցումների անհրաժեշտությունը



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

«Ակցիզային հարկի մասին» օրենքում կատարված վերջին փոփոխությունը (22.05.2014թ.) հիմնավորվում էր նույն օրենքում 2011թ. դեկտեմբերին կատարված փոփոխությունների անարդյունավետությամբ: Ըստ հեղինակների՝ նախորդ փոփոխության կիրառման արդյունքում զգալիորեն նվազել են «չքեղության հարկով» հարկվող ավտոմեքենաների ներկրման ծավալները և ՀՀ պետական բյուջե մուտքագրվող գումարները, որոնք ըստ փորձագիտական գնահատականների կազմում են 3-6.5 մլրդ դրամ: Այս հիմնավորումից ելնելով էլ՝ առաջարկվում էր հանել 25.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին, ներառյալ՝ թողարկման փորձի վրա և 4500 սմ³ և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդափոխ ավտոմեքենաների համար սահմանված ակցիզային հարկը: Օրենսդրական նախաձեռնության հիմնավորման մեջ բացակայում է տնտեսական փորձաքննության հատվածը, չեն ներկայացվում վիճակագրական ցուցանիշներ նման մեքենաների ներմուծման, դրանից ստացված բյուջեային մուտքերի, նվազման միտումների վերաբերյալ: Հասկանալի չէ, թե նախատեսվող փոփոխությամբ պետությունը վերանայում է վերաբերմունքը հասարակության հարուստ խավի նկատմամբ՝ հերթական արտոնությունը տրամադրելով նրանց, թե՛ իրավիճակային լուծում է տալիս խնդրին՝ առանց գաղափարախոսական մոտեցումների փոփոխության:

Դժվար է միանշանակորեն պնդել՝ օրենսդրական փոփոխության արդյունքում բյուջեի մուտքերը կավելանա՞ն, թե՞ ոչ, քանի 2011թ. թեթև մարդափոխ ավտոմեքենաների ներմուծման ակցիզային հարկի բարձրացման արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, երբ, սպասումներին հակառակ, բյուջեի մուտքերը չավելացան, այսինքն՝ ներմուծողները վերանայեցին իրենց վարքագիծը՝ փորձելով խուսափել թանկարժեք գնումներից, որի արդյունքում բյուջեն ունեցավ կորուստներ: Շքեղ ավտոմեքենաների վրա ծախսելու փոխարեն այդ միջոցները պետք է որ վերաբաշխվեն տնտեսության այլ ոլորտներում՝ ապահովելով համապատասխան բյուջեային մուտքեր:

Կարելի է միայն ենթադրել, որ փոփոխությունը ավտոմեքենաների ներկրման վրա խթանող ազդեցություն կունենա, սակայն գնահատել հնարավոր բյուջեային մուտքերը բավական դժվար է: Ենթադրելի է, որ որոշ ներմուծողներ ցանկություն կունենան ներմուծել մեքենաներ՝ նկատի ունենալով Մաքսային Միության հնարավոր անդամակցությունն ու մաքսատուրքերի բարձրացման պարագայում ՌԴ-ում դրանք իրացնելով շահույթ ստանալու հնարավորությունը: Այս տեսանկյունից օրենսդրական նախաձեռնությունը սպասարկելու է հասարակության որոշակի շերտի շահեր և կարճաժամկետ արդյունքներ է ապահովելու, քանի որ Մաքսային Միության անդամակցությունից հետո խաղի կանոնները վերանայվելու են: Փորձագետների շրջանում կա նաև մոտեցում, որ թանկարժեք ավտոմեքենաներ ներկրողների շուկան կարող է թուլանալ և ավտոշուկայում կորցնել իր դիրքերը, սակայն դա այնքան էլ իրատեսական չէ, քանի որ պահանջարկի դեպքում միշտ առաջարկ կլինի, խնդիրն այստեղ այլերկրներում և Հայաստանում նույն շերտի վարքագծային տարբերություններ են, որոնք «չքեղության հարկով» կանոնակարգվում են: Ամփոփելով նշենք, որ օրենսդրական նման փոփոխությունները պետք է հայեցակարգային լուրջ հիմք ունենան, այլ ոչ թե ժամանակավոր կամ կարճաժամկետ լուծումներ հետապնդեն՝ կասկածի փակ դնելով հասարակության մեջ առկա անհավասարաչափ եկամտային բաշխվածության կրճատման գաղափարախոսությունը:

Փոփոխություններ հեռուստագովազդի կանոնակարգումներում Մեսրոպ Հարությունյան մեդիա փորձագետ

«Գովազդի մասին» եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքներում կատարված փոփոխությունների (21.06.2014թ.) նպատակը թունդ ալկոհոլային խմիչքների գովազդի արգելքի կանոնակարգումներում փոփոխություններ կատարելն էր եւ որոշակի ժամանակահատվածում նման գովազդի թույլատրումը: Մինչ այս փոփոխությունները, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը (2002 թվականի հունիսի 26-ի փոփոխություններից եւ լրացումներից հետո) ձեւակերպված էր այսպես. «5. Արգելվում է զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) խմիչքների (բացառությամբ կոնյակի) եւ ծխախոտի գովազդը»:

2014-ի հունիսի 21-ին ընդունված օրենքն ասում է. «5. Արգելվում է՝ ա) զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով ցուցադրել ծխախոտի գովազդ, բ) զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով ժամը 06:00-ից մինչեւ 22:00-ը ցուցադրել թունդ ալկոհոլային խմիչքների (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային միավոր), բացառությամբ տեղական արտադրության կոնյակի, գովազդը»:

Այսինքն՝ «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծի էությունը հանգում է երեկոյան ժամը 10-ից մինչեւ առավոտյան ժամը 6-ը թունդ ալկոհոլային խմիչքների գովազդը թույլատրելուն:

Որքանով է նպատակահարմար նման թույլատրությունը: Օրինագծի հեղինակները (Արման Սահակյան, Սամվել Ֆարմանյան, Նաիրա Կարապետյան, Տաճատ Վարդապետյան, Լեւոն Մարտիրոսյան, Էդմոն Մարության) նախագծին կից ներկայացրել են մի քանի հիմնավորում.

ա) նշված ժամերին բնակչության անչափահաս հատվածը չի դիտում հեռուստատեսություն, հեռուստատեսություն, գործող օրենքի տրամաբանական սահմանափակումները մնում են ուժի մեջ,

բ) Հայաստանի Հանրապետությունում սպառվող ալկոհոլային խմիչքների արտադրությամբ կամ ներմուծմամբ զբաղվող խոշոր ընկերությունները, գործող օրենքի սահմանափակումներով պայմանավորված, մեր երկրի համար չեն նախատեսում գովազդային բյուջեներ, ինչը տարեկան կտրվածքով բավականին լուրջ ֆինանսական միջոցներ են,

գ) նախնական հաշվարկները ցույց են տալիս, որ օրինագծի ընդունմամբ կարող են տարեկան մինչեւ լրացուցիչ 1 մլրդ. դրամի գովազդային միջոցներ ուղղվել հայաստանյան հեռուստատեսություններ:

Ընդհանրապես, ծխախոտի եւ թունդ խմիչքների գովազդային սահմանափակումները (ավելի հաճախ՝ արգելումները) միտված են բնակչության առողջության պահպանման նպատակներին, ծխելու մոլուցքի եւ ալկոհոլիկ կախվածության աստիճանական նվազմանը: Այդ արգելումներն ու սահմանափակումները արտասահմանյան շափերկներում բարերար ազդեցություն են ունեցել կրճատելով ծխախոտի եւ ալկոհոլի սպառումը:



ՓՈՐՃԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

Հայաստանում թունդ ալկոհոլային խմիչքների գովազդի թույլատրումը գիշերային ժամերին միանշանակ չի ընդունվել ինչպես առողջապահության, այնպես էլ ՋԼՄ ոլորտի ներկայացուցիչների եւ փորձագետների կողմից: Ոմանք հակված են կարծելու, որ սա որոշ հեռուստաընկերությունների եւ թունդ ալկոհոլային խմիչքների արտադրությամբ կամ ներմուծմամբ զբաղվող ընկերությունների համարել լոբինգի արդյունք է, եւ գովազդային մուտքերի ավելացումը, ինչը վկայակոչում են օրինագծի հեղինակները հիմնավորման մեջ, էական ազդեցություն չի թողնելու հեռուստաընկերությունների բովանդակության որակի վրա: Փորձագետների մի այլ խմբի կարծիքով փոփոխությունը էականորեն չի ավելացնի թունդ ալկոհոլային խմիչքների սպառումը Հայաստանում (հետեւաբար եւ չնչին ազդեցություն կունենա բնակչության առողջության վրա), այն մեծապես կազդի միայն այս կամ այն ապրանքանիշի խմիչքների (առավել շար գովազդվողների) սպառման վրա:

Երկրորդ, մրավախություն կա, որ օրենքի նպատակը միայն մի քանի, շուկայում առաջադարձ համարվող եւ, ինչպես ընդունված է կարծել, իշխանությունների հետ սերտ առնչություն ունեցող հեռուստաընկերությունների գովազդային եկամուտներն ավելացնելն է:

Երրորդ, օրինագծի հեղինակները հիմնավորման մեջ բերել են եւս մի փաստարկ, այն է՝ օրենսդրական նախաձեռնությամբ պահպանվում է բնակչության անչափահաս հարվածի վրա ալկոհոլային խմիչքների գովազդի ազդեցության սահմանափակումը՝ ժ. 06:00-ից մինչեւ 22:00-ն ընկած ժամանակահատվածում: Մեր կարծիքով սույն օրենքի եւ այս հիմնավորման դեմ բերվող առարկությունը արդարացի է. մենք ապրում ենք 21-րդ դարում, եւ դժվար է պարկեռացնել, որ երեխաները (անչափահասները) ժամը 22-ից հետո քնած են ու հեռուստատեսային հաղորդումներ չեն դիտում, հետեւաբար՝ չեն ընկնի օղու եւ այլ թունդ խմիչքների գովազդի ազդեցության փակ: Սրացվում է, որ օրենքի հեղինակները, առնվազն թունդ ալկոհոլային խմիչքների գովազդի թույլատրված ժամերին, գովազդի ազդեցությանը ենթարկվելու պատասխանատվությունը գովազդատուներից եւ հեռուստաընկերություններից փոխանցել են ծնողներին եւ ընտանիքին. վերջիններս պիտի վերահսկեն, որ երեխաներն այդ ժամին քնած լինեն կամ եթե արթուն են, չդիտեն հեռուստահաղորդումներ, որոնցում կարող են լինել օղու եւ այլ թունդ խմիչքների գովազդներ:

Օրենքի հեղինակները հիմնավորման մեջ նշել են եւս մի փոփոխության մասին. գործող օրենքով զանգվածային տեղեկատվության էլեկտրոնային միջոցներով թունդ ալկոհոլային խմիչքներից (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) ողջ օրվա ընթացքում, առանց որեւէ սահմանափակման, թույլատրվում էր միայն կոնյակի գովազդը: Օրենսդրական այս փոփոխությամբ նախատեսվում է թույլատրել բացառապես տեղական արտադրության՝ հայկական կոնյակի գովազդը: Սա գուցե թե դրական փաստ է սույն օրենքում թույլատրումը, եթե նկատի ունենանք, որ կոնյակի գովազդի թույլատրումը նախկինում հիմնավորվում էր այդ խմիչքի՝ իբրեւ Հայաստանի խորհրդանիշներից մեկը լինելու հանգամանքով: Սակայն գործող օրենքում «տեղական արտադրության» բառակապակցությունը բացակայում էր, ինչը կարող էր տեղիք տալ նաեւ արտասահմանյան արտադրության կոնյակների գովազդի:



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

Այս օրենքի հետ փաթեթով ընդունվել է նաև «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքը. Ըստ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի՝ մինչ փոփոխությունները գործող 60-րդ հոդվածի 11-րդ կետի՝ հեռուստառադիոընկերությունների կողմից թունդ ակտիվության (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) խմիչքների (բացառությամբ կոնյակի) գովազդի հեռարձակման համար սահմանում էր տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապարիկի չափով: Նոր օրենքով այդ տուգանքը կկիրառվի հիշյալ տրիպի գովազդի՝ 06:00-ից մինչեւ 22:00-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակման համար: Այս փոփոխությունը մեկնաբանման կարիք չունի, այն բխում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների եւ լրացումների տրամաբանությունից:

5-րդ նստաշրջանում Ազգային ժողովում քննարկվեց մեդիայի ոլորտին առնչվող եւս երկու նախագիծ: Մեկը «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», օրինագիծն էր, մյուսը՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (որ հանրության կողմից ստացավ «ընդդեմ ֆեյքերի» անվանումը) օրինագիծը:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրինագիծը, որի նպատակը Հանրային հեռուստատեսությամբ գովազդի (բացառությամբ սոցիալական գովազդի, ինչպես նաև մշակութային, ուսումնական, գիտակրթական եւ սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին տեղեկությունների) արգելումն էր, 2014 թվականի մարտի 12-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ, ապա ընդգրկվել հունիսյան քառօրյա օրակարգ, սակայն երկրորդ ընթերցում այդպես էլ չի անցել: Կառավարության հեղինակած այս նախագիծն մանրամասն կարելի է անդրադառնալ ամբողջությամբ ընդունվելուց հետո: Հիմա միայն ասենք, որ նախկինում սահմանված էր, որ Հանրային հեռուստատեսությունում գովազդի ծավալը չէր կարող գերազանցել ընդհանուր հաղորդումների 5 տոկոսը: Սակայն հեռուստատեսությունը հաճախ էր խախտում այդ սահմանը: 2010 թվականի հունիսի 10-ին կատարված փոփոխություններով այդ շեմը բարձրացվեց 7 տոկոսի, եւ վերջին հերթագոյությունները ցույց էին տալիս, որ հանրայինը կարողանում է պահպանել այն: Այսուհանդերձ, շատ փորձագետներ եւ ոլորտի մասնագետներ պնդում էին, որ հանրայինում պետք է բացառել գովազդը: Եվ հիմա, ողջունելով հանդերձ նման օրինագիծը, պետք է նաև նշել, որ եթե գովազդային մուտքերից կորուստների չափով չավելացվի հանրային հեռուստատեսության բյուջեային ֆինանսավորումը կամ եթե չգտնվեն ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ, ապա լավ նպատակին (սպառողը կունենա ընդհանուր ուղղվածության մի հեռուստաալիք, որի հաղորդումները կդիտի առանց գովազդային միջարկությունների) միտված նախաձեռնությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ հանրայինի հաղորդումների որակի վրա:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

Հաջորդ` «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրինագիծը շրջանառության մեջ դրվելուց անմիջապես հետո արժանապատվաբար ուղորդի բուռն հակազդեցությանը, եւ 2014 թվականի մարտի 31-ին կազմակերպվեցին խորհրդարանական լսումներ, որից հետո հեղինակները որոշեցին ժամանակավորապես կասեցնել դրա հետագա քննարկումները:

Արդ, ինչո՞վ է վրանգավոր սույն նախագիծը: Ամենից առաջ նրանով, որ ցանցային լրատվամիջոցների վրա դրվում էր նրանց գործառույթների մեջ չմտնող պարտավորություն, այն է` ստուգել որեւէ գրառման հեղինակի ինքնությունը, իսկ բավարար փյալներ չներկայացնելու դեպքում պատասխանատվություն կրել գրառման, այդ թվում մեկնաբանությունների համար: Երկրորդ` հնարավորություն էր տալիս ցանկացած անձի` պահանջելու ցանցային լրատվության միջոցների հեռացնելու որեւէ հրապարակում կամ գրառում, որն այդ անձի սուբյեկտիվ կարծիքով վիրավորանք է կամ զրպարություն: Սա ամբողջությամբ կխաթարեր ցանցային լրատվության միջոցների գործունեությունը: Մենք այս օրինագծին կանդորադառնանք ավելի մանրամասն, եթե այն նորից մտնի շրջանառության եւ/կամ քննարկվի եւ ընդունվի իբրեւ օրենք:

Լրացուցիչ ջրառ Սևանից Ինգա Զարաֆյան «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ

Սևանա լճի մակարդակի բարձրացման նշանակության մասին

Սևանա լճից առավելագույնը 170 միլիոն խմ ջրբացթողումների ծավալը սահմանված է հետազոտությունների համալիր ծրագրի արդյունքում: Հետազոտության արդյունքները ներառված են 2001թ-ի մայիսի 15-ին ընդունված «Սևանա լճի մասին» և 2001թ-ի դեկտեմբերի 14-ին ընդունված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների փորձարկման ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքներում: «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի հիմնական պահանջներից մեկը Սևանա լճի ջրային դրական հաշվեկշռի պահպանումն է և լճի մակարդակի բարձրացումը ծովի մակարդակից մինչև 1903,5 մ: Հակառակ դեպքում, լիճը կկորցնի ինքնամաքման կարողությունը և կսկսի ճահճանալ: Սևանա լիճն արդեն իսկ ձգնաժամային վիճակում է լճի 60%-ի աղտոտված լինելու պատճառով: Լիճն աղտոտվում է կոյուղաջրերով և աղբով, ավիամերձ փարածքներում գյուղատնտեսական գործունեությունից առաջացած թափոններով, հանքարդյունաբերական փոքսիկ թափոնների` Սևանա լիճ թափվող զեպերի հատակում կուտակմամբ, օրգանական զանգվածներից չմաքված ավերի ջրի փակ մնալու, ձկան պակասի հետևանքով օրգանական նյութերի չյուրացման, թափոնների մաքրման միջոցառումների բացակայության պատճառով: Կառավարությունը Սևանա լճի մակարդակը կառավարում է երկու եղանակով` իջեցնելով լճի մակարդակը մեծաքանակ ջրբացթողումների հաշվին և բարձրացնելով մակարդակը Արփա-Սևան թունելով լիճ ջրի մուտքի հաշվին: ՀՀ ԳԱԱ-ին առընթեր Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի 2013թ-ի զեկույցում նշված է. «Լճի մակարդակի վերաբերյալ ամենալուրջ խնդիրը կապված է Արփա-Սևան թունելի դեֆորմացված հարվածների վերականգնման ծրագրի հետ»:



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՀԱՎԵԼՎԱԾ)

Նշենք, որ 2000-2010թթ. Արփա-Սևան թունելով լիճ էր մրնում փարեկան 230-250 միլիոն խմ ջուր: Վերջին երեք փարիներին ջրի մուտքը լիճ խիստ պակասել է. 2011թ-ին Սևանա լիճ Արփա-Սևան թունելով մտել է 53.3, 2012թ-ին՝ 78.2, իսկ 2013թ-ին՝ 134 միլիոն խմ ջուր:

Ինչ վերաբերում է Սևանա լճի ջրի բացթողումներին, ապա անկախ ոռոգման պահանջի կառավարությունը փարեցփարի ավելացնում է Սևանի ջրբացթողումների ծավալը՝ ձգտելով դուրս չգալ լճի մակարդակի 1900 մ սահմանանիշից: Եթե 2001թ.-ից Սևանի մակարդակը 1896.32 մ նիշից սկսեց անշեղորեն բարձրանալ, և լճի մակարդակի փարեկան աճը հասավ 44-55 սմ-ի, ապա 2008թ.-ից լճի մակարդակի բարձրացումը դանդաղեց: 2008թ. կառավարությունը ավելացրեց ջրի բացթողումները՝ հասցնելով մինչև 304 միլիոն խմ-ի, և լճի մակարդակի բարձրացումը կազմեց ընդամենը 6 սմ: 2011 թ-ին լճի մակարդակը բարձրացավ 22 սմ-ով: 2012թ. կառավարությունը «փրկեց» իրավիճակը՝ Ազգային ժողով ներկայացնելով 320 միլիոն խմ ջրբացթողման առաջարկ: Այն ընդունվեց, և արձանագրվեց լճի մակարդակի իջեցում 2 սմ-ով: 2013թ. լճի մակարդակը բարձրացավ 5 սմ-ով՝ 2014-ի սկզբին կազմելով 1900,16 մ:

2014թ. կառավարությունը ԱԺ-ին առաջարկեց առաջիկա 5 փարիներին ջրբացթողման փարեկան ծավալը հասցնել մինչև 240 միլիոն խմ-ի՝ ներկայացնելով հետևյալ հիմնավորումը. «Մինչև Սևջուր գետի և Արարատյան դաշտավայրի սփորգեփոխյա ավազանի սակավաջրության խնդրի լուծման, ինչպես նաև առաջնահերթ ջրամբարաշինության միջոցառումների իրականացման ավարտը ժամանակավոր՝ մինչև 2019թ. հունվարի 1-ը, Սևանա լճի ջրի բացթողման փարեկան չափաքանակ սահմանել առավելագույնը 240 մլն խմ»:

ՀՀ բնապահպանության նախարարության դիփոդությունը, թե «...Սևանա լճի ջրի փարեկան բացթողումների չափաքանակը սահմանելիս խստագույնս առաջնորդվել Սևանա լճի ջրային դրական հաշվեկշռի ապահովման սկզբունքով», կառավարությունն առաջնային չհամարեց՝ բացատրելով, թե «վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված, Սևանա լճի ջրի բացթողման փարեկան չափաքանակներ սահմանելիս՝ առաջարկվող լրացմամբ սահմանվող ընթացակարգի կիրառումը նպատակահարմար չէ»:

Մարտի 19-ին ՀՀ ԱԺ-ում փետի ունեցան խորհրդարանական լսումներ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների փարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրինագծի վերաբերյալ, որին դեմ արտահայտվեցին ներկա բնապահպանական կազմակերպությունների, ոչ իշխանական խմբակցությունների ներկայացուցիչները: ԱԺ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովում, սակայն, ընդամենը մեկ ձայնի առավելությամբ նախագիծը դրական եզրակացություն ստացավ և ընդգրկվեց օրակարգ:

Խորհրդարանի ու կառավարության գաղտնի խաղերը

Ապրիլի 28-ին խորհրդարանում առաջին ընթերցմամբ քննարկվեց օրինագծի այն տարբերակը, որով ջրբացթողման տարեկան առավելագույն չափաքանակ սահմանվում էր 240 միլիոն խմ-ը, իսկ որպես ժամկետ նշվում էր առաջիկա 5 տարին մինչև 2019 թ. հունվարի 1-ը: Հանրային կարծիքի ճնշման ու բնապահպանական կազմակերպությունների քննադատության արդյունքում ժամկետը կրճատվեց, և 5 տարին դարձավ 1 տարի, իսկ բացթողնվող ջրի քանակը՝ 240 միլիոն խմ, նախագծի ընդունման որևէ փուլում չքննարկվեց ընդհանրապես, մինչդեռ ընթացակարգի ավարտին պարզ դարձավ, որ կառավարությունը որոշել է ավելացնել բացթողնվող ջրի քանակը ու 204 մլն խմ-ն դարձնել 270 մլն խմ: Այդ մասին հիմնական զեկուլոդ, Զրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյանը հայտարարեց միայն նախագիծը երկրորդ ընթերցմամբ ներկայացնելիս, իր խոսքի ավարտին, ընդամենը մեկ հակիրճ նախադասությամբ: Ուշագրավ է, որ հարցը ներկայացվեց արտահերթ նստաշրջանում, որի ընթացում օրակարգ ընդգրկված մի քանի տասնյակ նախագծերից և ոչ մեկը լրջորեն չքննարկվեց: Դրան մասնակցում էին միայն ՀՀ-ական պարզամավորները, ովքեր դահլիճ էին եկել զուտ նախագծերին կողմ քվեարկելու համար:

Թեպետ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագիր»-ը ներկայացված է որպես առանձին օրենք, սակայն այն «Սևանա լճի մասին» օրենքի անբաժանելի մասն է (գլուխ 3, հոդվածներ 11-14): Սա նշանակում է, որ ոչ կառավարությունը, ոչ ԱԺ-ն իրավունք չունեն դրանում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կհակասեն «Սևանա լճի մասին» օրենքին: Ոչ կառավարությունը, ոչ խորհրդարանը իրավունք չունեն անտեսել Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի կարծիքը, որի իրավասություններն ամրագրված են նույն «Սևանա լճի մասին» օրենքով: Իսկ հանձնաժողովը հատուկ պայման էր դրել թույլ չտալ ջրային բացասական հաշվեկշիռ՝ լճից 170 միլիոն խմ-ից ավելի մեծ ծավալով ջրբացթողումների դեպքում: Մինչդեռ կառավարությունը որոշեց, իսկ ԱԺ-ն ընդունեց օրենքում այնպիսի փոփոխություններ, որոնք հակասում են երկրի պետական, ազգային և ազգամարական առաջնահերթություններին: Անտեսվեց այն կարևոր հանգամանքը, որ Սևանա լճին վերաբերող բոլոր օրենքները, ծրագրերը, կառավարության որոշումները պետք է դիտարկվեն բացառապես «Սևանա լճի մասին» օրենքի համատեքստում:

